Խնդրեմ՝ հաճեցէք ընդունիլ մեր և մերայնոց սրտագին ցաւակցութիւններն այն ամենազաւան կորստեան համար՝ զոր կը կրէ Մամուրեան մեծանուն և ազգօգուտ դերդաստանն յանձին իւր մի սրտահատորին և մեր ալ սիրասուն Սանին:

Կ'աղօթեմք առ Աստուած որ զօրավիզ լինի Ձեզ ամենեցունցդ:

Հանազազ ամենախորին յարգանօք Ձերդ բարեացակամ և անձնուէր

Կ. Պոլիս, 23 Յուլիս 1897

Մ. ԱՔԻԿԵԱՆ

Առ Մեծապատիւ

Մասրէնու Էժ. Մարտիրէան

Մեծարոյ Տէր


Երբէք չէի կարող մտաբերել որ գրիչը ձեռք պիտի առնէի այսպիսի կսկծալի սարսազայի մ'առթիւ Ձեզ գրելու համար, գրել և ի՞նչ գրել, ի՞նչ խօսիլ տարաբաղդ հօրդ որ կ'ոգրաք կորուստն անզուգական որդեկիդ, խօսիլ, ո՛չ, այլ ապարան մնալ այդ սիսի անհուն վշտի մ'առաջ և արտասուել լսի Ձեր հետ:

Ձեր վճռոն մեծ է, այո՛, բայց Դուք առաւել մեծ էք քան այն, Դուք Ձեր բարձր հոգւոյն խորին միայն կարող էք քաղել այն մեծ ոյժն որու կը կարօտիք դիմագրաւելու համար այս դառնակսկիծ աղէտին, իմինիս նման տկար գրիչներու չէ տրուած Ձեզ սիւսիանաց խօսքեր ուղղելու նկրտիլ. մեզ կ'մնայ խորապէս ցաւակցիլ Ձեզ ի սրտէ և մեր արտասուքը խառնել ձերին հետ՝ հայցելով Անհունէն սիւսիել Ձեր անհուն թախիժն:

Ընդունեցէ՛ք Տէր Ձեր սգակիր կենակցին հետ իմ և ամուսնոյս խորին վշտակցութեան հաւաստիքն որով

Մնամ միշտ Ձերդ

ՍԱՐԻԱՄ Մ. ԳԱԼՔԱՔՃԵԱՆ



Սիրելի Մ. Մանուրեան

Մերունազարդ Հայրի՛կ

Սե ամսւ մը սրտեց զիս և կայծակի շիթեր շողալով սրտիս վրայ՝ խոր տպաւորութեան ներքև ճմլեցին հոգիս, երբ ծագիլապօսակ որդւոյդ ազնիւ Վահէի մահուան բօթարեր գոյժը հնչեց ականջիս։ Ս.յս յեղակարծ բաժանումը շատերս լացինք, և ցաւօք սխալի յիշենք նորա յիշատակը յախտեան, զինա աստղ մ էր առաւօտեան, և մօլորակներու մէջ արև։ Ի. բ անհամեմատ ձիրքերով, աննման վարքով, աննման հանճարով և ամենայն կատարութեամբ օժտուած, ի մի բան բարոյականութեան տիպար էր իւր ընկերաց մէջ, իւր հեզահամրոյր բնաւորութեամբ ամենուն սիրելի և փարելի։ Ձեմ ուզեր յառաջ երթալ, զի վշտ է ճանապարհը և շեմ ցանկար Ձեր վեհ ոգին և ընտանեացդ վշտակիր փափուկ սրտերը իմ մտիթ արականաւս արիւնեւէ։ Արդարև չգիտեմ լա՛մ, թէ մտիթ արեմ. այլ միայն այսչափ, թէ դուք արի արանց էք, հոգւով ալ արի, սրտով ալ արի, և արի խորհրդով։

Հարկ չկայ ըսելու թէ « աշխարհս դառնալեաց » է, ո՞վ ոք երկրածիններէն կարաց խոյս տալ մահուան ճիրաններէն, ո՛չ միայն մահկանացուներ զհոնեցան, այլ նոյն ինքն Աստուած։

Յի, ուրեմն, առ այս ի՞նչ կրնանք առարկել, զի տիեզերական օրինաց դէմ սէտք չէ վէտաիլ, այլ սիրով արիութեամբ յաղթել այն ամեն դժուարարար իրողութեանց և սիրալի համբերութեամբ տանել ազէտից։

Քաջ գիտեմք թէ մարդ ենք տկար և անզօր, սակայն

սէ՛աք է զօրանանք հոգւով և սրտով և մեզ յօգնու-
թիւն կանչենք Աներևութին զօրութիւնը: Չմոռնանք
հոգւոյ անմահութիւնը: Թէ և մարմինը կը մեռնի, այլ
հոգւոյ բարեմասնութիւնները անմեռ են և իրր ազնիւ
կնդրուկ կը բուրեն ամեն տեղեր և հետևաբար ան-
ջինջ տառերով կը գրուին նոցա յիշատակը մաքուր
սրտերու մէջ՝ ինչպէս էր և է ազնիւ Վահէի՛նը մեր հոգ-
ւոյ մէջ:

Սակայն այսու հանդերձ մենք ո՛չ իւրիք կրնանք Ձեր
գառնակսկիծ վիշտը ամբել և ծերունի հօրդ լեզի ար-
ցունքը սրբել, այլ միայն կ'մաղթենք որ Մխիթարիչ Ս-
Հոգին՝ փարատէ Ձեր և ազնուափայլ ընտանեացդ սըր-
տէն վիշտն ու արտմութիւնը և Ձեր այս զոհողութեանց
փոխարէն՝ ասդիս ընտանեօք հանդերձ անսասան սլահէ
ի վարձ Ձեր նահատակութեան:

Վշտակից

Եզմիր, 24 Յուլիս 1897

ԽԱԶԱՏՈՒՐ ՔԶՆՅ. Տ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Սիրելի Պրն. Մամուրեան

Մեծ տխրութեամբ իմացայ Ձեր սիրելի Վահէի՛ն
վաղահաս մահը: Խեղճ բարի Վահէ, չի կրցաւ վերջապէս
տոկալ իր անողորմ հիւանդութեան ու գնաց — ծագիկ
մը ևս — բուրել այլուր, ժպիտներու հովիտը, անտա-
րակոյս լաւագոյն վայր մ'է քան հոս:

Կ'զգամ թէ որքան ծանր է հարուածը Ձեզի ու Ձեր
ազնիւ Տիկնոջ համար, չեմ փորձեր սփոփանքի բառ մը

դ անհերու Ի՛նչ օգուտ ունին բառերը, խորապէս կը ցաւակցիմք Ձեզի:

Կան կորուստներ որ կրկնակ դառնութիւն մ'ունին, նախ կը շուարեցնեն իրենց խորհրդաւոր ու անդրդուելի վաղահասութեամբ, յետոյ կարծես ամեն ինչ կը տանին իրենց հետը, շու, նուազ, ծիծաղ, միօրինակ դատարկութիւն մը ձգելով իրենց ետին:

Այսպէս է Վահէի մահը:


Ու սիրելի Պրն. Մամուրեան, համբերութիւնն, միայն արի համբերութիւնն է մարդուս միակ ապաւէնը Նախախնամութեան այս անօրէնութեանց դէմ:

Հաճեցէք ընդունել խորին ցաւակցութեանս հաւաստիքը ու նոյնին թարգմանն ըլլալ Տիկին Մամուրեանի քով,

Որով մնամ միշտ Ձերդ

ՍԻՀՐԱՆ ՎԱՐՊԵՏԵԱՆ

Կոնստն, 24 Յուլիս 1897



Անմոռաց Բարեկամ, վշտահար Հայր

Ձեր և մեր Վահէին հիւանդ ազին վիճակին շատոնց ծանօթ էի, ու Սրբազանէն տեղեկութիւններ կ'ուզէի շատ անգամ: Ո՛չ Ձեզ, ո՛չ Տիկինը, ո՛չ Վահէն և ո՛չ Պ. Հրանտը կրնայինք մոռնալ ու մոռցած էինք: Ժընէվ գալու ատեն մեր հետերնիս բերած սակաւաթիւ լուսանկարներուն մէջ էին Ձերինները ու Վահէին պատկերը Բաթաքիին ու Մամային պատկերներուն մէջտեղ ու պղ-ոթիկներուս պատկերներուն հետ խառն աչքիս առջև կը կենայ գրասեղանիս դիմացը: Թղթակցութիւնը

դադրած էր մեր մէջ. բայց ո՛չ իմ ու Չարուհիին սըր-
տին մէջ խոր համակրանքն Չեր և Չերիններուն նկատ-
մամբ, միշտ սնուած յիշատակովն այն օրերուն (երանի՛
այն օրերուն) զորս իրարու հետ անցուցինք:

. . . Աւ, Դուք անմտտանալի բարեկամներէս էիք ու
էք Դուք Չերիններովը, ո՛վ Մամուրեան, զոր անձամբ
ճանչելէս չատ յառաջ սիրել սովորած եմ և որուն, հա-
կառակ իմ լուսթեանս, անհատական, ընտանեկան ու
հրապարակային կեանքը չէր դադրած բնաւ հոգւոյս
մէջ արձագանք տալէ:

Ա՛հ, սիրեցեալ ու պատուարժան բարեկամ, հա՞րկ է
ըսել թէ ինչպէս Ասհէիք կորստեան սև լուրը ցնցեց
մեզ ու ժգին, արիւնտակց մեր սրտերը. «Յրի՛ցս զըժ-
բազդ հա՛յր, երի՛ցս զժրազդ մա՛յր» գոչեցինք Չարու-
հին և ես, գոյժը ու լրագիրը մեր ձեռքին մէջ՝ մնացած
պաղած շանթահար: Երևակայեցինք Չեր վիշաբ, Չեր
սրտերուն վիճակը, ուր խորը Արոյրին յիշատակը դեռ
մխայ, ուր վաղամեռ սիրեցեալ հարսի մը բացած վերքը
դեռ տաք տաք կ'այրի ու կը կսկիծայ և ուր հիմայ նոր
արին արցունքի գետ կը բխեցընէ Ասհէն որ կը մեկ-
նի, ու զգացինք անհուն սուգը որ կը պարուրէ Չեր հո-
գիները, ու մերինները, անոնց եզրայր ու սիրուղ, ա-
նոնց կարեկից՝ լացին Չեր արցունքով, արտմեցան Չեր
սուգով: Բայց Ասհէն մեր բարեկամաց որդին ըլլալէ
աւելի բան մ'էր մեզ համար, մեր հոգւոյն զաւակն էր
եղած, երկու տարի մտաւոր կեանքով ապրելով մեզ
հետ և մեր քով, մեր յիշողութեան մէջ կենդանի ու
սիրելի հետք դրօշմած էր, հետք մը հրեշտակային երե-
ւոյթի, հետք մը փափկահոգի ուսանողի, մանկացեալ
Մամուրեանի: Աստի լացինք զինքը մենք ալ աղէխարչ

դդացմամբը ծնողքին՝ որ բախտին անգութ ծաղրող աշ-
քին առջև կ'ունենայ դառնաղէտ տեսարանը տարինե-
րով զգուած յոյսերուն՝ որ մոխիր դարձած են, փափ-
կօրէն փայլախուած մատաղագեղ գլխիկին՝ որ կ'օտրած
չուշանի պէս գետին է ինկեր . . . :


Արքան մեծ է հանճարդ, ո՛ր Մամուրեան, այնքան
մեծ է տառապանքդ, զիտեմ և որչա՛փ աւելի ազնիւ
հոգին Մայրիկին ու Եղբօր՝ ա՛յնքան աւելի խորունկ
վէրքն ալ իրենց:

Իցի՛ւ հանճարդ, որ չէ միայն զգայնութիւն՝ այլ և
խորհուրդ լայնաթև, իր գրկած անհուն ոլորտին մէջ
լսէր ու իրեններուն լսել տար հծծելն այն ձայներուն՝
որք միայն կ'սփոփեն մեծ ու ազնիւ հոգիները:

Ձեզ վշտակից

Ճընելի 21 Յուլիս 1897

Բ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ



Մեծայարգ

Մասքեոս Էժ. Մամուրեան

Ի Զմիւռնիս

Ճարտար գրչի պէտք կայ որ Ձեզ մխիթարական մի
քանի խօսքեր ըսելու փափաքին հետ՝ չվերանորոգէ այն
ցաւը, վիշտը, չբանայ ա՛յն վէրքը որ Ձեր սրտին մէջ կը-
րած էք: Բազդը անգութ է, չնայիր, աջէն ձախէն կը
հարուածէ, ինչպէս այս անգամ՝ Ձեր ամենասիրեցեալ
ողբացեալ որդի Պրն. Վահէին: Կը հաւաստեմ Ձեզ որ

մեր ընտանիքը Ձեր և Ձերայնոց զգացած վշտի եթէ ո՛չ հաւասար, նուազ չզգաց սիրելեացս այս անկայուն աշխարհի տարարող դիպուածների ամենահաւելին պատահելովը: Ես որ մի քանի սիրական բարեկամներու մահուան ականատես եղած ըլլալով, սիրտս քարացած, անզգայացած կը կործէի, չկրցայ շանիծել այս վաղաժամ դժբաղդութիւնը, չկրցայ անզգայ մնալ: Ներքին երկու պայքար կը մղուէին էութեանս մէջ, մին ինձ կ'ըսէր թէ անդարմանելի է այս կորուստը, թէ ազնիւ հայր մը անժամանակ կը կորսնչնէ իւր այնպիսի մի որդին, որոյ համար ճիգ, խնամք կը թափէր իւր անզը ձգելու ապագայ սերունդին, միւսը թէ մարդ քանի որ ենթակայ է ամեն վայրկեան դիպուածների հարուածներին, ինչո՞ւ պէտք է այնչափ տկար ըլլայ որ ողբայ սգայ իւր սիրելիներէ զրկուելուն համար, քանի որ նրա՞նք կ'ազատուին այս վշտով, տառապանքով և հազիւ թէ վայրկենական զոհունակութեամբ լի աշխարհէն:

Մարդկային կողմուածքի և հոգւոյ, սրտի տկարութեան մէջ այսպիսի անհեթեթ գաղափարներ կ'անցնին մանաւանդ՝ երբ վշտով բեռնաւորեալ է, զորս կը համարձակիմ գրել այնպիսի անձի մը. որ ինքզինք նուիրած է ուղղելու մարդկային տկարութիւնները, ջանալով հզօր կամք մը մտցընելու ի նոսա որ միակ պէտքն է կարենալ առկալու:

Մայրս, եղբայրս, Զատիլը ցաւակից կըլլան ինձ հետ Ձեր և Ձեր ազնիւ Տիկնոջ սգալի օրերուն,

Ընդ գրկելով ախրագին

ԳԱՐՈՒՆ Ս. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ



Սիրելի Քրն • Մամուրեան


Մեծ ցաւօք իմացանք այս շարաթ Ձեր սիրելի տղուն մա՛չը, կրնանք երեւակայել ի՞նչ մեծ կորուստ է Ձեզ, մանաւանդ խեղճ Տիկին Մամուրեանին, բայց մահը այնպիսի բան մ'է, որ մեր ձեռքը չէ արգիլել, ուստի թէպէտև դժուար բան մ'է, աշխատելու է Վահկի յիշատակովը մխիթարուիլ:

Մայրս մասնաւորապէս իր վշտակցութիւնը կ'յայտնէ Ձեզ և Տիկինին, նայնպէս Տիգրան և ես,

Մնամ միշտ Ձեր անձնուէր

Մանչեսթըր 25 Յուլիս 1897

Ա. ՎԱՐՊԵՏԵԱՆ



Ազնիւ Մասքէնու էժ • Մամուրեան

Վշտակիր բարեկամ

Անագան ուրեմն, թէև ոչ առանց պատճառի, կուգամ իմ խորին վշտակցութիւնս յայտնել Ձեզ և Ձեր Ազն. Տիկնօջ՝ այն անմխիթար կսկիծին համար, որ հարուածեց չարացար Ձեր ծնողական սիրտը: Չգիտի համարձակիմ սփոփանաց ո՛չ իսկ մէկ բառ ըսել Ձեզ, այս աշխարհի վրայ զաւկի կորստեան համար սփոփանք չէ սահմանած Նախախնամութիւնը: Խրրև հայր՝ կ'զգամ բովանդակ դաւնութիւնն այն վշտին՝ որ մշտնջենապէս ի սուգ համակեց Ձեր պատուական ընտանիքը, և կըր-

նամ երևակայել նորափակ զերեզմանին առջև սլոտ-
կանելի հօրդ արտասուածքին ողբերն իւր հոգեհատոր
սիրելոյն, յաւէտ ողբացեալ Վահլի, անշունչ մնացոր-
դին վրայ: Ինչպէս չխնայեց մահը Ձեր հէք որդեկին,
այն աշխոյժ, կորովալից, այն սիրուն երիտասարդի ա-
րևուն, Վահլի, բարեկամ, կրկինք խնայելու էր պատուա-
կան ծնողացդ՝ այս անհնարին ցաւը, զոր ոչ միայն
Դուք՝ այլ և բոլոր Մամուրեան ընտանեաց համակիր
բարեկամք, ընդ որս և ես չսիրտի կարենանք երբէք մո-
ռացութեան տալ:


Ընդունեցէք ուրեմն, Տէր և Տիկին Մամուրեան, իմ
մշտն ջենաւոր վշտակցութեանս հաւաստիքը, անկեղծիկ
համակրութեանս այս դոյզն առ հաւատչեայն,

Ձեզ միշտ ցաւակից

26 Յուլիս 1897

Յ. ԳՈՒՐԳԵՆ

Կ. Պօլիս - Օրթաքէոյ



Մեծապատիւ

Մասրէնու էժ. Մամուրեան

Իգմիր

Յանակնկալս զմեզ ալ խոցեց սեւազիծ և զուժարեր
մահադղն Ձեր սիրեցեալ զաւկին, զոր կորուսանելու
դժբաղդութիւնն ունեցած էք ներկայ ամսոյ 15 ին:
Ձեր բարեկամներն դեռ մոռցած չէին տխուր տպաւո-
րութիւնն այն զառն կորուստին, զոր ունեցաք հերուն
յանձին պաշտելի Մարիին և ահա հեռուէն տխուր ու

կսկծ ալի արձագանքը Ձեր նոր դժբաղդութեան, որու ենթարկուած էք այժմ Գուք և Ձեր համայն պարագայք: Մենք Ձեր համակրողներն ու բարեկամները, Ձեր վշաերուն լոկ արձագանքէն երբ կը զգածուինք և ի խոր կը խոցուին մեր սրտեր, կ'մրռենք թէ որքա՛ն ծանրաթախիժ ու դժնգակ կերպիւ կը տառապիք Գուք այս սոսկալի հարուածին դժոխքներ ծանրութեան ներքեւ:

Աշխարհի իրողութիւններն ու դէպքերը սովորական անձուկ հայեացքով դիտողները թերեւս դժուար մխիթարուին իրենց փշաերուն մէջ, բայց կը հաւատամ թէ Ձեզի համար այնպէս պէտք չէ ըլլայ, վասն զի խմստասէրի մը կորովարիւր աչերով ու գիտունի լայն մտածութեամբ կը տեսնէք ու կը զննէք Գուք ամէն ինչ: Աթէ մենք կենդանի մնացողներս անմահութեան կնիքը ունենայինք մեր ճակատներուն վրայ, արժան էր յուսահատօրէն վշտանալ մեզմէ բաժնուողներուն համար, բայց քանի որ այնպէս չէ՛, ու մենք ընդ հակառակն միքանի օրուան վաղանցիկ ու խարուսիկ կենցաղով մը միայն անջատուած ենք մեր սիրելիներէն, որոնց պիտի միանան մեր էութիւններն այնքան աւելի կանուխ, որքան աւելի բաղձապատկուին փուշերն ու դատասկներն այս վշտաց հովտին և որքա՛ն մանաւանդ մերձ գըտնուինք այս հովտին ելքին, պէտք չէ լրջօրէն վշտակրիլ անչնչացող մեր սիրելիներուն վրայ, զորս կերպով մ'ալ բարեբաղդ ու երանելի պէտք է համարել, վասն զի նորանոր դառնութիւններ ու պատրանքներ ունենայէ ու տառապելէ դադրեցան անոնք:

Միւս կողմէ, գիտեմ սակայն որ ունենալով զգայուն բանաստեղծի հոգի և դժոխ հօր մը գորովալի զգացումները, որքա՛ն դժուար պիտի համակերպիք ամենա-

սիրելի որդեկի մը անդարմանելի կորուստին պատճառած կսկածանաց: Այս պարագային ալ պէտք է մտարեբեւ յօյժ դառնագոյն և անբերելի դժբաղդութիւններ, որոց կ'ենթարկուին ստէպ անթիւ ու անհամար ծնողական սրտեր: Ա'երևի թէ Նախասնամութիւնը, ինչպէս կ'ըսեն, մեծ վիշտերը վերապահած է մեծ սրտերու և ծանր աղէտներն ու վտանգները կը կարգադրէ իւր և միջոց քաւութեան:

Աը ցանկամ որ Արկինք իբ անակնունելի բարիքներով ու մխթարութեամբ սփոփէ Ձեր վիշտերն և շնորհէ Ձեզ այսուհետև ծերութեան մը անվիշտ ու անդորր օրերն, այնպէս որ Ձեր ընտանեկան դժբաղդութիւններն կարենայիք մոռնալ ի տես սփոփեալ ու մխթարուած մարդկութեան:

Հուսկ ապա, կ'աղաչեմ, մեծապատիւ Տէ'ր, որ հաճիք ընդունել վշտակցութեանս անկեղծ զգացումներն և նոյնը հաղորդել Ձեր Ազնուափայլ Տիկնօջ, սիրասուն հարազատին ու ազնուազարմ պարագայից:

Մնամ ընդ միշտ Ձերդ անձնուէր

Երզնկա 26 Յուլիս 1897

Ս. ԱՄԱՏԵԱՆ

Մեծայարգ

Տէր և Տիկին Մամուրեան

Եթաւ խոցեցաւ սիրտս ստանալով սեաների քարտէսը՝ որ կը գուժէր սիրելի Ահհիզ Ձեր սրտի հատուրին դառն և անդին կորուստը ի 21 ամաց ծաղիկ հասնակի:




Յիրաւի ծանր է հօր և մօր մը սրտին համար տանել այդ հարուածոյն և կ'ըզամ թէ՛ որքան յուզուեցաւ Չեզպիսի հօր մը, գրականութեան պատկառելի մեծ ներկայացուցչին հօգին, իր ալեզարդ հասակին մէջ, և այն ազէտալի պահուն ո՛րքան վեր ի վայր չըջեցաւ Չեր խոհուն միտքն ու զգայուն սիրտն: Բայց վստահ եմ որ Դուք Չեզմէն կրցաք մխիթարել զՁեզ, այդ պահուն ամենէն աւելի համոզուելով թէ՛ նա գնաց լաւագոյն կեանք մը վայելելու համար: Դուք ո՛ր քաջ ևս գիտէք թէ ի՛նչ է կեանք և ի՛նչ է մահ:

Աստի աւելորդ կը համարիմ ճգնիլ մխիթարական բառեր յերիւրելու և մանաւանդ զի այն տեսակ կորուստի մը առթած վիշտը սփոփելու համար կը ախարանան մարդկային միտքն ու հանճար, միայն Աստուած կարող է սպեղանի դնել սրտի վէրքերուն, և ես՝ իմ սրտագին ցաւակցութիւնս յայտնելով և արտասուքս Չեր արտասուաց խառնելով հանդերձ, կը մաղթեմ յերկնից շնորհել Ձեզ և համայն Չերայնոց Երկնային մխիթարութեան ոգին, և բուժել Չեր սրտին վէրքը իւր անհաս, անբաւ և ամենահնար զթութեամբ:

Մնամ խորին յարգանք միշտ աղօթարար,
Առաջնորդ Հայոց Կեսարիոյ

Կեսարիա 28 Յուլիս 1897

ՏՐԴԱՏ ՎՐԴ. ՊԱԼԵԱՆ



Մեծ • Մասքէնու Էժ • Մաւնուրեան

Սգազգեաց բարեկամ

Դառնակսկիծ սրտիւ կարդացի Ձեր անդարմանելի կորստեան, Ձեր սիրելի որդւոյն ծագկափթիթ վահէի մահուան բոթը:

Կեանքի մէջ կան անալնկալներ, պատահարներ, որոց հանդէպ մարդ կային իմացականութիւնը անխօս արձան մի է, բառ չգտներ արտայայտելու, եթէ գտնէ, շատ վտիտ և անդոյն, զգացածը բացատրելու, այսպէս է անողոր մահուամբ սիրելիին, հոգեհատորին կորուստը:

Կ'զգամ, թէ չկայ բան Ձեր սրտի անհուն կսկիծը ամբողջ, ովկէանն իսկ անբաւական է այդ կրակը չիջուցանելու: Մաքիս առջև կը պատկերանայ ծերունին Յակոր, չըջապատեալ իւրայիններէն, որ եկած էին ի մխիթարութիւն սիրելի որդւոյն, Յովսեփայ գազանարեկ ինեւելոյն վրայ, բայց «ո՛չ կամէր մխիթարել, ասէ զի սովին ոգով իջեց առ ուղի իմ ի դժոխս»: Այո՛, սգաւորին համար սիրելիին համար ըրած սուգն է մխիթարութիւն, միթէ նուա՞զ մխիթարութիւն է տեսնել, որ այլք և ս մեզ հետ և մեղի շափ կը սգան և կ'ողբան մեր կորստեան վրայ, անհանգուրժելի կը լինէր, երբ այլք մեր լացին վրայ խնդային:

Գիտեմ, եթէ Ձեր անդ մի ուրիշ հայր լինէր՝ անգէտ կեանքի անթափանցելի զաղտնեաց՝ սրտի կսկիծէն մարդկօրէն պիտի տրամարանէր և պիտի ըսէր, թէ վահէն հազիւ քսան և մէկ գարուններ տեսած՝ չէր հասունացած հնձուելու համար, ինչն՞ այս անողորմ հասու-

մը այս անդարձանելի խոցը, կամ Յակոբի նման պիտի ըսէր, «Չիս անորդի արարէք, Յովսէփ չէ ի միջի Շմաւոն չէ ի միջի, և զԲենիամին ևս առնուցո՞ւք», առ հասարակ ամեն մարդ ոց բնական դատումն է այս, բայց քըրիստոնեայն անհամեմատ բարձր է քան զմարդ և քան զնահապետն Յակոբ, հետեւարար մեր դատաստանը պիտի լինի հիմնեալ Աւետարանի քարոզած հաւատոյն վըրայ, «Եթէ ո՛չ հատն ցորենոյ յերկիր անկեալ մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ»: Աւետարանի խօսքին և քրիստոնէի կեանքին աճումը մի և նոյն օրինօք կը կատարուի: Չկայ քրիստոնէին համար կեանք առանց մահուան, ճշմարիտ և երանաւէտ կեանքի ծնունդը մահն է, Վահէ մահուամբ ծնաւ ի նօր կեանս, երանի նմա, որ ի Տէր ննջեաց:

Չըլլածք աւելի ցաւակցող և հարուածեալ յանկնուելի պատահարաց քան զՅօր, բայց նորա միակ մխիթարութիւնն էր «Կամք Տեառն օրհնեալ եղիցի, Տէր ետ և Տէր էառ»: Խորին և անկեղծ ցաւակցութեամբ նոյն համբերութիւնը և մխիթարութիւնը կը մաղթեմ Ձեզ, Ձեր Տիկնօջ, Որդւոյն, ազգականաց և բարեկամաց:

Մնամ Ձեզ յշտակից

Էրուսակմ 29 Յուլիս 1897

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿ. ԽԱՊԱԵԱՆ



Հ Ե Ռ Ա Գ Ի Ր


Monsieur Mamourian

SMYRNE

Profondément ému, perte cruelle, votre fils bien
aimé, participe deuil.

Կ. Պօլիս, 29 Յուլիս 1897

P. TÉLIAN



Վսեմախոն Մասքէնու ԷՔ. Մամուրեան

Ի Զմիւռնիս

Որդեկորոյս Հայր

Ազնիւ Վահէի մահուան դոյժն շանթէ մ'աւելի ուժ-
դին հարուածեց, բոցաւառեց հոգիս, որ հրարուիսի մը
վերածուած՝ կը հալէ, կը հիւծէ գիտ: Աեանքն այժմ
դառնացած է ինձ համար և ամեն վայրկեան իր ոչնչու-
թեամբն կը հայելեանայ իմ աչաց հանդէպ: Անհունին
դադարաբար յոյժ մտածել կուտայ ինձ, միտքս ալեկոծ,
անհնար կը թուի ինձ վայրկեան մ'իսկ ուշի ուշով ու-
սումնասիրել կեանքի գաղտնիքը կամ ըմբռնել իմաս-
տասիրական ո և է հարց: Անկեղծօրէն կը յայտնեմ թէ
մեր սիրեցեալ Վահէի տարածամ բաժանումն, տխուր
սարսուազդեցիկ տպաւորութիւն մը թողած է իմ վրայ:

Զարիազանց զգածեալ, հոգւոյս խորէն ցաւելով՝
կ'ողբամ այն կեանքն որ Մամուրեան ընտանեաց չքե-

Ղսփայլ աստղն էր, ծիրանեզոյն յոյսերու պսակն, կեանք մը գեղեցիկ, որ պարտ էր ծիլ ու ծաղկիլ, իր ստացած գաւաթարակութեամբ խնկելու ընտանեացն սրբաւայրն և միանգամայն փայլելու ազգային շրջանակներու մէջ իրրև արժանաւոր յաջորդն իւր հօր:

Մօտէն ճանչցած եմ՝ բարեմոյն Վաչէն թէ ի Զ. Թիւռնիա և թէ ի Կ. Պօլիս և համազուած՝ թէ սրբան բանիմաստ Հրանտ Մամուրեան, հակառակ իւր հոգեկան ձգտումներու, սրտի սեղմումով մը իրաւասօր կը քանայ պրկել իւր հանճարի թոխն, մարել իր բնածիր տաղանդն և խնայտասէրի հեղնական ժպիտ մ'ունենալ հանդէս այնպիսի ժողովրդի մ'որու շատ քիչեր գիտեն հանճարի, գիտութեան և հոգւոյ մեծութեան առջև գլուխ ծնել: Ընդհակառակն ողբացեալն Վաչէ, հրէտակի մը շափ անմեղ, Յիսուսի օրհնած շնորհագեղ տղոցմէ մին, լոկ բարութեան մարմնացում, կը ցանկայ իր հօր բռնած շաղէն ընթանալ, ապրիլ խոկալ և զըրել իրեններուն համար, իւր կեանքն անոնց նուիրել, անոնց կեանքի հետ հիւսել, և ահա այս փափաքներով, այս մտածումներով միայն նա կը զարգանար:

Ահ, երբ կը մտարերեմ թէ հայրիկին տիպար, անոր Բենեամին Վաչէն յառաջադիմութեան բուռն տենջեր ունէր որք՝ կեանքի ոսկեղօծումն են, յոյսեր՝ որոնք իւրն ու կանթեղն են կեանքի, երբ կը մտածեմ թէ իրրև զարնան մի ծաղիկ գրեթէ առանց փթթելու թօշնած է, իրրև մի ասուպ վաղանցիկ, մարած է այդ լոյսն շողշողուն, որ պարտ էր իր փողփողումներով լոյս և ճաճանչ սփռել, երբ կը խոկամ թէ Վաչէ իւր ոսկեղօծ երազներու, անհուն բաղձանքներու փոխարէն, գերեզմանի ցօրտ, նեղ քարն դտած է՝ կը սարսոխմ, կը քստմնիմ: Եւ քանի երևակայութեանս առջև կ'երևայ

նա սև հողին մէջ պարտակուած և թէ այլ ևս փա-
կուած են իւր աչերն կենաց լուսոյն, աչերն գեղազոյն
— անմեղութեան նշանակ — թէ ո՛չ ևս կը ժողտին նո-
րա շրթներն, իր սիրեցեալ մայրիկին, որ իր հոգւոյ հա-
տորին ոսկեղենիկ յիշատակներով, նորա անմուանալի
սիրովն կ'այրի ու կը տոչորի: Աւ երբ կը մտածեմ, թէ
ո՛չ ևս ալեզարգ հօրն և զգայուն եղբօրն համբոյրներն
կը հպին Ահհի ճակարին՝ զի ո՛չ ևս է նա . . . արտա-
սուք կը թափեմ, արտասուք, արիւնով ներկուած, բըզ-
խած սրտիս ամենէ խոր ծաքերէն և հոգւոյս ան-
դունդներէն:

Պաշտելի Տիար Մամուրեան, այս տկար տողերն՝ ու-
րոնք արիւնահոս սրտի մը հառաչներն կը պատկերեն՝
անզօր են հայեւեացընելու իմ հոգւոյ կսկծանքն, քանզի
բոլորովին մեղամաղձիկ խոհերուս մատնուած եմ, մը-
թագնած է երեակայութիւնս, կը ցանկամ աստղերու
բոյլեր հեղեղել և անոնց լոյսովն սփոփանքի ճառա-
գայթներ շողացընել Ձեր սգալիր սրտերու մէջ, այլ ա-
ւա՛ղ, կը տարակուսիմ թէ գունաթափ, անզօյն են
բացատրութիւնքս, քանի կ'զգամ որ զանոնք ներշնչող
հոգին ուժաթափ և դալկացած է:

Ինչպէ՞ս սրբել Ձեր արտօսըն, երբ ես ինքս կ'ար-
տասուեմ, ինչպէ՞ս հանդուրժել և շանիծել ճակատա-
զիրն երբ նա իր ամենէ անզուժ և անողոք վճիռն է
արձակեր և խնր իր ընտանեաց իր սիրելիներու գրկէն
ա՛յն ազնիւ երիտասարդն, որ հոգւոյ հազուադիւրս բա-
րեմասնութիւններով օժտուած մտքի և սրտի խնամեալ
կրթութիւն մ'ստացած՝ իւրայնոց գողար սիրոյն և զին-
քըն ճանչցող և սիրողներու հիացման առարկայն էր, որ
ունէր կեանք գեղեցիկ և խոստ'նալից, որ քսան և մէկ
դարուններ հազիւ բոլորած՝ իւր անտիական ծաղիկ հա-


սակին մէջ թօշնած է — անչուչո Եղեմի պարտիզին հը՝
մայքն ու զարդն կազմելու համար: —

Խորապէս կ'զգամ, անմխիթաբ հայր, Ձեր անդարմա՝
նելի, անկշիռ կորուստն, խոր անսահման վիշտն: Ձեր
մորմօքն ամօքելու, զձեզ կարենալ մխիթարելու համար
հոգւոյ անպայման զօրութիւն և շափազանց արիւ՝
թիւն պէտք է, այլ եթէ յուսահատութեան ժամերէ
վերջ կուզան վայրկեաններ, երբ կը սիրէք խոկալ կե՝
անքի վրայ, ապա ինեցէք իմաստասիրական խոհերու և
այդու մեղմեցէք Ձեր ցաւերն, մերթ ընդ մերթ դար՝
ձուցէք Ձեր աչերն դէս Աստուած, գիտութեան Արե՝
ւելք և մտածեցէք որ եթէ Վահէ իբրև մի նորարոյս
ծաղիկ թօշնեցաւ՝ գնաց զարդարել Բուրաստանն Աս՝
տուծոյ, գնաց իբրև մի փայլուն աստղ՝ երկնքի լոյսն
յաւելուլ: Եւ եթէ կը հաւատանք, թէ Փրկիչն Գող՝
գոթօյի Խաչին վրայէն իւր թափած արտասուքովն մեր
ցաւերն մեղմացուց և անապակ արիւնովն գերեզմանե՝
րու բաղն փոխեց, անմահութեան դուռ շինեց, եթէ
կը հաւատանք որ Գերերկրայինն իր Որդւոյ մահովն մեր
կորստեան ձեռագիրն եղծեց, թէ գերեզմանէն անդին
կայ յուսոյ օրրան մը, լուսոյ աշխարհ մը, կայծ մը, չող
մը որ զմեզ կը հրահրէ, մեր հոգին կը զօրացընէ, զմեզ
կը կապէ այն հաւատքին, այն գաղափարին, թէ մի օր
պիտի միանանք մեր սիրելիներու հետ՝ այն ժամանակ
մեղմեցէք Ձեր վշտերն և ջանացէք ամօքել ցաւերն վըշ՝
տահար Տիկին Մամուրեանի, զի նէ մայր է, մայր գործ՝
վախի և զգոյուն մօր սէրն անհուն է և անպայման, նէ
ամենէ շատ կը մօրմօքի և կ'աղէկեցի, սիրօփեցէք և հէք
ագնիւ Հրանտն ալ, որ կրկին մխիթարութեան պէտք
ունի, աւա՛ղ չքնաղ Մարիի տարածամ՝ բաժանու մէն
վերջ՝ ազնուաղէմ Վահէի անհետացումն ալ պիտի
տեսնէ եզերս:

Մենք, Վաչէն սիրողներս, կ'ողբանք այն ազնիւ երկ-
տասարդն որ աւտղ խամբեցաւ այն պահուն՝ երբ իւր
լուսոյ գրիչն ձեռք առած, ձեռքն իր հանձարեղ ճակ-
տին դրած, գրականութեան գինւորադրել կ'ուխտելու
Բարէ, այդ պահուն իսկ, մահն տաղ քրտինքով ողողեց
մեր սիրելի Վաչէն, որու յիշատակին համար արտասու-
քի կաթիլներ սչացս մէջ տղօթքներ կը դողջօջեն և այդ
արցունքի շիթերն պիտի լինին նորա հոգւոյն աստղերն
որ յաւէտ մեզ պիտի յիշեցնեն իւր անմեռ անունն:

Յոգշան, 30 Յուլիս 1897

ՎԱՀՐԱՄ ՄԱՄԻԿԱՆԵԱՆ



Վսեմ. Մասքեոս Մամուրեան Էմբեօսի

Զմիւռնիս

Վշտահար բարեկամ

Սրտի անհուն թնամութեամբ ստացայ երէկ Ձեր
դրկած մահազգն, որ երևոյթին տէ՛ս՝ իր պարունակու-
թեամբն ևս արտութեամբ համակեց զմեզ: Սիրտս ու
կրօնս մենքս այնքան վիրաւորուեցան, որ միջկեցոյ ու
լացի, հակառակ իմ տակունտութեանն որ բազմաց զար-
մանք էր պատճառել:

Իմ վիրաւից բարեկամ, Ձեր ազնիւ Վաչէն ալ իր
համանուն վե՛հ Վաչէին նման ծաղկափ խամբեցաւ,
ուստի և Ձեր վե՛րքն ու վիշտն իրօք անդարմանելի են:
Ձի եթէ ժողովուրդը վիրաւորուի, բժշկիները կ'բուժեն
գայն և եթէ բժիշկները վիրաւորուին, բժշկապետը կը
բուժէ, արդ՛ եթէ բուն ինքն բժշկապետն է վիրաւոր-

ուողն ո՞վ կը յանդգնի դարմանել զայն — և ոչ ոք, եթէ ոչ՝ իր վսեմ հանճարն: Թոյլ առէք ինձ ուրեմն, բարեկամ, համարուրել Ձեր սրախ սփիկանն սր աղնիւ վերքերովն ու վտերով տոգորուած է շուրջ կէս դարէ ի վեր, սրքել Ձեր աչերն. սփոփուեցէ՛ք աղէ՛ և սփոփեցէ՛ք Ձերայի ններն, որոց ամենուդ կ'մատուցանեմ իմ և ընտանեացս և մասնաւորապէս Պ. Հ. Երամեանի սրբտառ ին և անկեղծ յարգանքն, համակրանքն, ու ցաւակցութիւններն:

Ձերդ

Վան, 30 Յուլիս 1897

Օ. ԲԱՐԱՂԱՍԵԱՆ



Պրն - Մասրէնուի Մամուրեակն

Ի Զմիռիկի

Սմենա վտալի Հայր

Սոյն ինչ լի յուսով սպասում էի ստանալ Վահէի — ամենման Վահէի — ինքնազիր նամակը և մտքի զարուիլ ու սփոփուիլ, ներհակարար անակնկալ ստացայ նորա մահադոյժը: Տակաւին չաւարտած ընթերցումը՝ պղտորուեցան աչքերս, սլտակեց զլուխս, թոթա՛ց սիրտս, փրզովուեցա՛ւ հոգիս, ալեկոծուեց միտքս և շուարեցաւ խելքս: «Սոյլ և ս չկայ իմ Վահէն, քանզի թաաւ յաւիտենականութեան զիրկն՝ թողլով ի սուգ անսխիժար իւր գորովագութ ծնողները, տխրազգեաց եղբայր, ազգական մէկ խօսքով մերձաւոր և հեռաւոր բարեկամ և ծանօթ »:

Հայր ծերունի, վարանուած է գրիչս, դողում է ձեռներս, քարացել է միտքս, խօսք չէ ծնում, որ գրէ


գրիչս, քանզի ի սպառ սառել է բանի ազրիւրն և կամ
 բարբոսի չորացել խօսքի ջուրն, Հեռեապէս ոչինչ չեմ
 կարող գրել, զի անզօր եմ գրելու, միայն կ'ասեմ.
 «Օրհնեալ ես Աստուած, և օրհնեալ է Քո կամքն, Դու
 այսպէ՛ս, այսպէ՛ս կամեցար որ իմ Վահէն հեռանայ հո-
 ջեղինաց աշխարհէն հրեշտակական անարատ հոգւով
 և միանալով հրեղինաց դասակարգին հետ օրհնէ և գո-
 վէ Քո Աստուածութիւնը: Դու, Տէր իմ, կամեցար որ
 Վահէն Քեզ մօտ լինի և ոչ մեզ մօտ, օրհնեալ լինի Քո
 կամքն և փառքն»

Խնդրելով ամենարարի Ս. Հոգւոց որ մխիթարէ և
 սխտիէ Մամուրեան աթոզը գերդաստանի անմխիթար
 սղաւոր անդամները՝

Մնամ ամենազնաւի և սղակից

31 Յունիս 1897
 Կ.Ս. Էջմրածին

Մ. ԵՊԻՍԿ. ԲԱՐՆՈՒԴԱՐԵԱՆ



Ազնուաշուք

Մասքէնու ԷՃ • Մանուրեանի

Իգմիր

Իհանալով այն դառն կորուստը զոր կրած էք յան-
 ձին Ձեր սիրեցեալ Վահէի, զգածուեցայ յոյժ, կը ճան-
 չէի զինքը, Թիզար պօրկեշտ և սղնիւ երիտասարդի,
 որու համար՝ կարժէր որ նուազ անողոք ըլլար չար
 բաղը:

Ձեր հայրական սիրան մխիթարելու յաւակնութիւնը
 չունիմ, կ'զլամ թէ՛ որքան խորունկ է ի Ձեզ, այս ա-

դէտքին պատճառած վիշտը, ցաւակցութեանս հաւատարմութիւնը միայն կը փութամ մատուցանել, մտղմեղմ միանգամայն, որ դարձեալ Ձեր իմաստասէր հանճարը բաւարարութիւն տայ Ձեզ, մեղմեղմ Ձեր այս ցաւն ու կսկիծ:

Ընդունեցէք խորին մեծաբանքներս,

Ձերդ

Այտըն, 2 Օգոստոս 1897

ՅՈՎ. ՄՍԵՐԵԱՆ



Ազնուաշուք

Տէր եւ Տիկին Մ. Մամուրեան

Ի Չմիւռնիս

Վշտահար ծնողք

Դեռ նոր դարձած էի Պօլիս մայրենի դիւզէս, ուր կը գտնուէի ամիսէ մ'ի վեր և կը դիմէի Գօսար - Գիւզ վայելել կարօտագին տեսութիւնն Ամեն Տ. Մեքիսեղէք Մուրատեանց Ս. Հօր, բանկալէն մատուցին ինձ սեւթոյր պահարաններ Փսփաղեան, Պէրպլրեան և մեր հասցէներով, նայելով վրան սրտատրտի, բացի, և կարգալով իսկոյն ցամքեցան ոսկերքս համայն, իսկոյն ցամքեցաւ արիւնս, գալարեցան աղիքս, ընդարմացան ոսկերքս համայն, միով բանիւ բոլոր էութիւնս լցաւ դառնութեամբ, քանզի այլ ևս չէր Վսէէ այն սիրուն և պաշտելի որդեակն, յաւիտենից հրածեշտ տուած էր աշխարհէս, բաժնուած էր ի սպառ մայրենի և հայրենի գորովսի զրկերէն, թողլով նոցա սրտի խորշերն ի

Թախծութիւն, ի կակիժ, ի հեղձաժգձուկ հասաչնեբր
Սրբաղան Հայրը բացակայ լինելով սրտարեկ մեկնեցայ
անտի և զնացի Վոսփոր, այլ անդ ևս չգանելով ներ-
կայ, ուր ուրեմն չարաթ առաւօտ, աստի տասն և հինգ
օր յառաջ, յաջողեցայ տեսնել զնա իւր սենեկին մէջ
ի Ս. Թագաւոր, ուր ողջունեցիք զիրար փոխադարձ
ցաւակցութեամբ: Նորին Սրբազնութիւնը իւր զիրա-
զդած բնաւորութեամբ կը տեսնուէր ընկճեալ խոր
տպաւորութեամբ, հանդէտ կանխահաս մահուան
ոգրացեալ Վաչկի, որոյ մանկութիւնը զգուած էր շատ
անգամ ի Չիւսին և պատանեկութիւնն ի Պօլիս առ
ինքն, առ մեզ և ի Պէրպլերեան վարժարանի: Ոչ նուազ
քան զնա յուզեալ և մեր ներքին մարդն, կը մնայինք
այնպէս տրտում տխուր: Անցան այսպէս օրեր ու ժա-
մեր և չեղանք կարող մեր գրաւոր ցաւակցութիւնն
յայտնել Ձեզ վշտահար ծնողացդ և արդէն վշտախոց
և դորն Պ. Հրանտի, վասն զի քանի անգամ որ ուզեցի
զրիչ ձեռք առնուլ, չեղաւ հնար շարժել զոյն, թէ ի՛նչ
կարելի է ըսել կամ ի՛նչ խօսիլ անսխալեցեացդ ի մխի-
թարութիւն, զի ոգրացեալն, այն ազնուատիրու պատա-
նին, որքան որ Ձեր Բենիամինն էր, մեզ ալ հաւասար
Չաւակի սիրելի հանդիսացած, իցիւ թէ տեսած և վա-
յելած չըլլայինք զինքն երկու տարի շարունակ, թերևս
յայնժամ այսքան խորագոյն չըլլար տպաւորութիւնս:
Քոյրս մահազդը տեսնելուն, հառաչանօք յիշեց ոգրա-
ցելոյն խօսքերէն սա զգայուն կտորն «Տիկին, կը սի-
րեմ զՁեզ Մօրս պէս, զի կը տեսնեմ ի Ձեզ շատ բա-
նելով նմանութիւնն Մօրկանս» և Հուկ ուրեմն այսպէս
մնաց գրելն այս օրուան, յորում կ'գամ վշտակցիլ Ձեր
անմոտանայի վշտին, ցաւակցիլ Ձեր ցաւոց և կցորդ լի-
նիլ ողբոցն, ու յայտնելով միանգամայն թէ կամու և

ալյամայ հարկ հարկադրեալ է մարդ խոնարհիլ բնութեան օրինաց առաջի, մնայ մեզ ուրեմն իրրե քրիստոնեայ սպասել հաւատով, յուսով և սիրով տեսութեանն ի Տէր ննջողի, որոյ ողորացեալ հոգին կը բերկրի այժմ անմահներու երանաւէտ գրօխտին մէջ սքանչելի ցնծութեամբ զմայլական տեսութեան Արեքարբեանց:

Այս կատարեալ համոզումով կը կնքեմ խօսքս, մաղթելով Ձեզ հոգի համբերութեան յօժար կրելու այն Խաչն Ձեր ալեոյթ հասակին մէջ և մնամ ընդ միշտ

Ձեզ վշտակից

Մ. Ս. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Յ. Գ. — Ինձ հետ վշտակից են կրինս, մայրս և զաւակունքս որ առ իս:

Տէր և Տիկին Յովհ. Փափաղեան և որդիք դստերք գրոյս միջոցաւ կ'յայտենն իրենց խօր վշտակրութիւնն ողբօգեալ Վահէի կանխահաս մահուան անթիւ և կը մոզթեն Ձեզ և Պ. Հրանտ հարազտախն երկնային մխթարութիւն:

Ա. Պոլիս, 2 Յոյնոս 1897

ՆՈՅՆ

Մեծանունն Տէր և Տիկինն

Թէ և անձնագէտ անձանօթ Ձեզ, այլ ջերմասլէս համակրող Ձեր գրական և կրթական եռանդուն գործունէութեան, կուգամք մեր խորին ցաւակցութիւնը և վիշտը յայտնել այն դառն կորստեան համար, զոր ըրիք

յանձին Ձեր սիրեցեալ դաւկին, Պ. Վաչէի մահուամբ:

Մաղթելով Ձեզ և Մամուրեան գերդաստանին բո-
լոր անդամոց բարերաստիկ օրեր, հաճեցէք ընդունել
այս առթիւ մեր ջերմ գղացումները,

Ձեր սքանչացողներէն մին

Նրիգար Զ Օգոստոս 1897

ՏԻԳՐԱՆ Ը ՓԱՓԱԶԵԱՆ

Միրելիդ իմ Մամուրեան

Վշտակիր բարեկամ

Ողբացեալ Վաչէիդ դառն կորուստը մեծ կսկիծ ե-
ղաւ ամենուս սրտին, կը սիրէի Վաչէդ իրրե իմ սր-
դիս և կը գուրդօրայի յոյժ վրան, զի կարի շնորհա-
ւի էր և համեստ: Յոյն կորստեան վրայ չունիմ գորովա-
ւիր ծնողացդ համար մխիթարութեան խօսք մը, զի
դուն, սիրելի Մամուր, ոսկի գրչաւդ իրր մեծ և պատ-
կասելի Նահապետ հայ գրականութեան՝ հրապարակի
վրայ ուրիշներու վշտաց ամօքիչն և սփոփիչն ես, զի-
տես քաջ ի՞նչ է կեանքը և ի՞նչ է մահ, միայն ի յիշա-
տա՛լ սղբացեալ գերազնիւ Վաչէիդ՝ հաճեա՛ ընդու-
նել յետագայ մի քանի խոնարհ տողերս, որ անկեղծ
որտի մը, անկեղծ սիրոյ արտայայտութիւնն է, զի ոչ
քեզմէ նուազ կը սիրէի որդիդ, որու՛ ժամանակ մը ես
ալ հայ լեզուն և կրօնը դասախօսելու բաղդն և պա-
տիւն ունեցայ, և որո՞ւ մօքէն կրնար անցնիլ որ դըժ-
բաղարար այսօր այլոց պէս նորա մահը պիտի եզերեր-

գեմ. Սախայն հոյստակիէք Անձանօթիւն, Աստուծոյ օրհնեալ կամաց, մենք մօրոյ կօրէն կ'ողբանք մեր կորուսաբը՝ որ անդ անալի է և կը տառապիւնք սոյն ազգաւոր կենաց մէջ, բայց Վահէզ մասնանիչ ցուցնեկա՛վ մեզ կըքէն Անձանօթիւն՝ կը հրճուի հոգւովն անդ յանանցն:

Ե Ղ Ե Ր Գ

Երբեմն ըզբեղ, սիրուն Վահէ, հեզ շառաւիղդ Մամուրեան,
Ասանձողաց երամին մէջ տեսայ ի յարկ Մեքորպեան,
Ո՛րպիսի շնորհ, ո՛րպիսի ձիւք չընաշխարհիկ ակներն
Փայլէր ի քեզ, վհա՛յ աչերս, ձիւք գ մեզ յայսնի զերդ արև:

Զօրեղ առիւծ էիր գոզցես խաւարին դէմ մաքառող,
Գառնուկ մ'էիր խիտ նազելի, տեքդ ու շարժու մ'դ մոյժ հեշտին:
Մտցիկ մ'էիր անուշաբոյր, զա՛րդ Միներվոյ գօրաստին:

Խոհուն էիր և եռանդուն, քեզ պնտուի մեր աչեր,
Զի ի ճակատդ գոգ ունէիր դու գիշերոյ վա՛ռ աստղեր,
Քս սուր նայուած՝ կարծես լսփեր արուած դասեր նոյն պահուն,
Ասանձողաց և ուսուցչաց ուչք մեային ըզմայլուն:

Նո՛յն յարատէ փոյժ և եռանդ, նո՛յն չորք, աղնիւ, նոյն և բարբ
Թէ ի Պոլիս ¹, թէ յօտար ² յարկ ցուցեր, բերեր քեզ մե՛ծ փառք,
Քրտաներորդ գար մազ տայր յոյս յաջորդ դու հարգ մեծանուն,
Քեզ յազգագոյն գրբիչ սոյն պատրաստեր հոյ գ պրտ թեան:

Մեծահամբաւ երբ հօրդ էիր աշխատակից քրանաջուն,
Պըսակէիր երբ քո ճգամբք նորա յոյս և սման ջոն,
Դըբաւ էիր մեծ համակրանք քո ծանօթից համօրէն,
Ինչու երանի՛ կը կարգային ծնողացդ անկեզ՛ծ սիրաք ամէն:

Սոյն օրինակ ընտիր ծընունդք փառք և պարծանք ծնողաց,
Պարգեք երկնից, տուն օրհնութեան և ընտանեաց անդին գանձ,
Քանի՛ մօշթեր նախանձաբեկ ծնանել սյսպես գառնուկներ.
Թէ չէի քեզ մտաւոր ճանչցած, սյսպէս սիրտ իմ՝ չէր յուզուեր:

¹ Ի Պէրպլեբան փարձարանի. — ² յԱնգղիոսկան փարձարանի տեղւոյս:

Ո՞ր, ոչբացեալ ընտիր սրգեակ, սոյն այս վերջին տարինեք,
Երբ ապառոջ շեղ տեսնէինք ի՞նչ դառնս դառն կոկիծներ
Կը սողային մեր ոգւոց մէջ, ի՞նչ ջերմօջիւրմ՝ պաղատանք,
Անկեղծ օրէն սլանսոյն յերկին, ո՞րչափ գուրգուրանք . . .

Ա՛խ, ի՞նչ մութ օր եղաւ մեզի, ի՞նչ մեծ սարսուռ զգացինք
Երբ զերդ շըռինդ սողեց մեզի հրաւերդ Երկնից ի հարկինք,
Յո՞ք և ի սուգ մեզ համոզեց սոյն ժամ կարի սարսաւլի,
Յանկարծ զամէնքս սարսեցուց, ո՞ր սիրտ տրդեօք ոչ փղծկի՛ :

Ա՛հա՛ յայս կէտ կեանք և աշխարհ՝ միտազնեցաւ իմ աչքի,
Արտայուզեալ արտունջ յերկին առ Անծանօթն ուղղեցի,
Մինչ կարդայի անէծք առ մա՛հ, արտունջ զայն փոշ զրկողին,
Ա՛հա՛ մի ձայն ինչ ինձ ծանօթ ցնցեց զիս այս միջոցին :

Ձայն էր ասի՛, ձայն սրտառուչ, վաղամեռի՛կ Ա՛ստէի,
Քր սերունքի տիպար առած՝ ժպտեր ի դէմս հրեշտակի,
Կարծես այս խօսք շեշտեր հոգին՝ յիս յառեղով իր աչքեր,
« Գու ուսուցիչս երբեմն կրօնի, զերկնից բառնաս արտունջներ :

Երջանի՛կ ես էի այս՝ ի գիրկ ծնողացս սիրելի,
Ա՛յլ երջանի՛կ յաւէտ եմ՝ աստ երանելեաց յակմբի,
Ինչ որ հաւատք՝ ինձ քո բերնով սորվեցուց ինձ յայդ ի կեանս՝
Ճշմարտութիւնք են համօրէն, իմ յանվտխճան ի հրճուանս :

Դուք և ծնողքս զիս արտասուէք, սոյդք ձեր սիրոյ են նըշանք,
Հոս չիք արտասուք, ո՛չ ցաւ, ո՛չ սուգ, յաւերժական հո՛ս է կեանք,
Հոս բիւրաւոր գուհտերու մէջ լողամ՝ լուսոյ յասպարէզ,
Հոս իմ հոգի ամէն շաճոյք կը ճաշակէ լիտպէս :

Ի՞նչպէս հաւատք ինձ ուսցընէր՝ ճշմարիտ են փրկչին բանք,
Ինչն է այս՝ ձեզ ճանապարհ, ճշմարտութիւն նոյն և կեանք,
Գիտցէ՛ք որ մա՛հ է բարերարն մահկանացուաց համօրէն,
Անծանօթին ձեզ այս՝ են կամք, զ՛Ա՛յն հոս հոգեք տեսանեն :

Մի՛ դուք, ծնողքս և բարեկամք, ալ զիս ողբօք, մի՛ բնաւ,
Ո՛չ մի լեզու այս լուսաճնամ՝ կայքս նկարել փառք է բաւ,
Կեցջիք միայն ձեզ զօրավիդ կալեալ հաւատք, յոյս և սէր,
Ընդ Ա՛րքուրայ՝ ի հրճուիմ ես աստ, բլլոյ պահպան ձեզ իմ Տէր, »

1 Իր փոքրիկ եղբայրը :

Ազնուաշուք

Մասքեոս Էժ • Մամուրեան

Զմիւռնիս

Գերազնիւ բարեկամ

Հազիւ մի տարին լրացած էր, որ Ձեր ազնիւ որդւոյն Պ. Հրանտի Տիկնոջ մահուան ցաւալի լուրն մեզ հասաւ, և ահա այսօր մեր բարեկամ սրտերուն մէջ բացուած այդ վերքը դեռ չսպիացած, երկրորդ մը կուգայ աւելի խոր վերք մը ձգել անոր վրայ, Պ. Վասնէի դառնադէտ կորուստը:

Իմ տղար գրչիս ոյժն չբաւեր Ձեզ նման հօր մը մխիթարութիւն պատճառել, միայն Ձեր դառն կսկիծին խառնելով մեր ամենախորին վշտակցութիւնը և Ձեր արտասուքին նաև մերինը, թերևս կիսած կը լինեմք Ձեր ցաւը:


Մխիթարութիւլ յերկնից կը մաղթեմ Ձեզ, Պ. Հրանտին և այլ բոլոր սգակից ընտանիքի անդամներուն, իմ անկեղծ և խորին ցաւակցութեան և վշտակցութեան արտայայտութեանցս կը մասնակցի նաև Տիկինս:

Մնամ ամենախորին յարգանօք,

Յաւակից բարեկամդ

Դաւրէժ, 3 Օգոստոս 1897

ՏՕՔՔ. 4. 3. ՓԱՇԱԵԱՆ



Մեծայարգ Մ. Մանուրեանի էփէնսի

Զմիւռնիս

Ազնիւ և սիրեցեալ բարեկամ

Այս երրորդ անգամն է, որ նամակ գրելու կ'ելնեմ Ձեզ, առջի երկուքը կիսկատար ձգելուս համար: Քանզի, քանի անգամ որ այս դժնդակ պարտականութիւնը կատարել ուզեցի, աձեն անգամուն ալ շուարած կը մնայի և չէի կրնար երկու խօսք մէկտեղ բերել, և շարունակ կ'ատածէի թէ ի՞նչ գրեմ և ի՞նչ ըսեմ:

Ձեր սիրեցեալ զաւակին մահուան գոյժը առնելէս երեք օր վերջը՝ քոյրերէս՝ որք Վառնա գացած են, նամակ մը առի, որմէ իմացայ թէ՛ մեծ քրոջս երկու մանչ զաւակներն ծանր հիւանդ են եղեր:

Սիրելի բարեկամ, հիմա եկու խելք հասցուր այս վիճակին, այս կեանքին, չեմ կարող Ձեզ մխիթարելու բառ գտնել, չեմ կրնար գաղափարներս հաւաքել և վերջապէս բան մ'ալ ընելու կարող չեմ:

Սիրեցեալ բարեկամ, ես որ կեանքին ամենէն դառն բաժակները մինչև մրուրը խմած եմ, կ'զգամ թէ ի՞նչ վիճակի մէջ ես Դու այսօր, և ինձի մեծ ցաւ տուող բանն ալ այն է, որ չեմ կրնար շնորհքով երկու տող բան գրել և զՁեզ մխիթարել, և ի՞նչ բան կայ մխիթարելու համար ալ ասկէ վերջը:

Մի՛ արհամարհեր Ձեր բարեկամը, և մի՛ ըսեր թէ՛ այս մարդն ալ բերնին եկածը դուրս թող տուեր է, աննկարագրելի ցաւ կ'զգամ, մտածելով՝ թէ՛ լեբան պէս զաւակ մը հօգին յանձնելն ի՞նչ բան է, և այս տու-

զերը որ կը գրեմ, արցունքներովս կը գրեմ, աշխարհի վրայ ամեն բան կը մոռցուի եզեր. բայց զաւա՛կը . . . անմոռանալի ցաւ է և մինչև գերեզման ալ պիտի երթայ ասանկ:

Ա՛լ ներէ ինձ որ աւարտեմ նամակս, և մինակ Ամենակալէն կը խնդրեմ որ մէկ հասփիլ զաւակդ Չեղ պարգև է և Չեր ու ազնիւ կնոջդ սիրան անոր վրայ նայելով մխիթարուի և նեցուկ ըլլայ Չեր այս աննկարագրելի և ցաւազին կենաց օրերուն մէջ:

Այս նամակս աւարտելն ետքը՝ գերեզման պիտի երթամ և զաւակիս գերեզմանին վրայ նոր շինել տուած խաչս պիտի հաստատեմ ձեռքովս, քանզի լերան զլուխ ըլլալուն, կը վախճամ որ տեղը կորսնցնեմ:

Չերդ

Կ. Պոլիս, 3 Օգոստոս 1897

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Մեծ . Մասրէնու Էժ . Մամուրեան

Զմիւռնիա

Որդեկորոյս Հայր

Ներկայ 1. ամսաթիւ Ա. Մաճըդ սևագիծ բոթարեր թերթն ստանալով կարեվէր խոցեցաւ նաև մեր սիրտն՝ համակելով զմեզ խոր տխրութեան մէջ:

Յանձին ազնուտիրտ Ա՛ահէին՝ յերկինս սլացեալ հոգեհատորիդ՝ ոչ միայն Մամուրեան գերդաստանն, այլ և հայ ազգն մեծ կորուստ մ'ունեցաւ:

Սոյն գիտակցութեամբ ցաւակից գոլով Ձեզ՝ սրտա-
բեկեալ հօրդ և համայն Մամուրեան սգակիր գերդաս-
տանին՝ կը հայցեմ Սուրբ Հոգւոյ մխիթարութիւնը:

Վշտակից Ձեզ և աղօթարար

Էստէմիշ, 4 Օգոստոս 1897

ՅԱՐ. ՔԶՅ. Տ. ՍԱՐԳՍԵԱՆ

Միրելի Մամուրեանի ԷՃԷՆՏԻ

Ձեր անհուն վշտը երկտողով մը ամօքելու յաւակ-
նոտութիւնը չունիմ:

Գիտեմ նաև թէ մխիթարական նամակները դու-
նացած սրտերը յուզելէ ուրիշ արդիւնք չեն ունենար:

Խեղճ Վահէին մահը ամբողջ Հայ երիտասարդու-
թիւնը սուգի մէջ կ'դնէ. ներեցէք որ ես ալ անոնց հետ
կ'գամ իմ անկեղծ վշտակցութիւններս արտայայտել
այդ տխուր պարագային տպաւորութեան՝ որ այդ ան-
դարմանելի կորուստը կընէ նաև իմ վրայ որ մին եմ
Ձեր վրայ սքանչացողներէն:

Հաճեցէք ներկայացնել լաւագոյն զգացմանցս հա-
ւատաբէն Տիկին Մամուրեանի և ընդունիլ վշտակցա-
կան յարգանքներս:

Գանիթ, 4 Օգոստոս 1897

Յ. ԱԼՓԻԱՐ

Սգակիր Տխար եւ Տիկիկն Մամուրեան

Մինչ օրէ օր սիրական Վաչէի առողջութեան բարի լուրերուն կսպասէի՝ շանթի հարուածի պէս եկաւ զգեանեց յոյսերուս հետ և սիրտս՝ իր տարածամ մամուհուան գոյծն:

Լիովին կզգամ մեծութիւնը Ձեր կսկիծին զոր կը կրէք Ձեր սիրասուն զուկին անգարմանելի կորստեան առթիւ և՞ զոր մխիթարելու համար որ և է խօսք հեղնութիւն յս պիտի լինէր:

Ուրեմն, Ազիւ Տիար և Տիկիկն Մամուրեան, հաճեցէք ընդունել սիրելի Հրանտին հետ իմ և կնոջս խորին և անկեղծ վշտակցական զգացումներն:

Մնամ ամենախորին յարգանօք սգակիր,

Ամոլիգ յաւէտ վշտակից և սգակից

Գափրէ, 5 Օգոստոս 1897

ԿԱՐ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Սիրելի Պրն. Մասքեոս

Ներկայիւս ստիպուած եմ կատարել մի տխուր յանձնարարութիւն: Նորին Վեհափառութիւնն, այսօր զիս իւր մօտ կրչել տարով, երկար հարցեր տուաւ ինձ հանգուցեալ սիրելի Վաչէի մասին, մանրամասն տեղեկութիւնները ստանալուց յետոյ՝ պատուիրեց ինձ յայտնել Ձերդ սիրելութեան իւր ամենախորին ցաւակցութիւնը, ամբողջ Մամուրեան զերդաստանին պատա-

հաժ Կժրադդու թեան մասին և իւր Հայրական օրհնու-
թիւնը՝ Ձեր ազնիւ, բայց սգազգեաց տոհմի բոլոր ան-
դամոց:

Բարեհաճեցէ՛ք, բարեկամ, վերստին ընդունել և իմ
ամենախօրին ցաւակցութիւնը, վշտալի,

6 Օգոստոս, 1897

Ի Ս. Էջմիածին

Մ. ԷՊԻՍԿ. ԲԱՐԵՈՒԴԱՐԵԱՆ

Ազնիւ Վշտախոցիկդ Մամուրեան

Արեւելեան Մամուլի վեւջին թիւն՝ որ կը գուժէր
տարաբազդիկն Վաչէի, կրասերադոյն զաւկիդ մահն՝
սիրտս դառնութեամբ լեցուց:

Տարիէ մ'ի վեր ախտին գործած աւերումներուն
տակ կը հիւժէր քօջասնունն Վաչէ, բայց չէր կար-
ծուէր թէ մահն անողոքելի, իրապէս դառն՝ սյղջամի-
արագ սխտի յախշոտակէր ծնողական գրկիդ գեղատե-
սիլ ծաղիկ մը՝ որ հաղիւ քսան գարուններ բոլորած,
յուսով ու լուսով արբչիւ, իմացականութեամբ ճոխա-
ցան, յանկարծ կիյնայ, կ'կքի խորշակահար, սուգ և
թախիծ սիրունով իր շուրջն, ո՛չ միայն մեծանուն գեր-
դաստանիդ, այլ և համայն Հայոց: Աւա՛ղ դեռ և ոչ հա-
սած իւր նպատակին, չսպասկուած իւր իլճերն՝ կիյնայ
կ'ննայ դալկահար, գերեզմանաց արեւմուտքին մէջ, մա-
հուան ցրտասարսուռ գիրիլը . . . :

Երթաս բարեա՛ւ ուրեմն, Վաչէ՛, ազնիւ պատանի,
հոգիդ՝ ամպերու կոյտը ճեղքելով, վեր բարձրացաւ
դէպի երկինք, անհունութեան գալտերուն մէջ թո՛ղ
սաւառնի, հրեշտակներու հետ թո՛ղ վառարանէ զ'ան-


ժառնգ Սրբաբիջն ընտելեանն Իսկ հողակոյտդ՝ դեռ ևս
 թարմ, ու բարեկամաց արցունքով ողորուած՝ ուր կը
 հանգչի հիւժեակ մարտինդ, ախար յիշեցընէ մեզ թէ
 Վահէին միշտ կենդանի է և յիշատակդ յարգի ու պատ-
 տական իրբն ձեռքերն ի մշտադալար թող մնայ միշտ կա-
 նաչ :

Ձունիմ այլ ինչ մխիթարական, որ կարենամ մխի-
 թարեւ զՁեզ, ո՛ր վշտացեալ հայր, նահապետ գրական-
 նութեան, գիտեմ, կզլամ, զի կորուսող մեծ, անգար-
 մանեի է, խոյդ՝ անբուժելի, թոչնիկն բոյնին մէջ զոր-
 նուեցաւ, աւա՛ղ . . . միայն երկնային մխիթարութիւն
 կը հայցեմ :

Վշտակից Ձեզ

Էստմբշ 6 Օգոստոս 1897

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ



Մեծայարգ Մասրէոս ԷՔ • Մաւորեան

Ի Զմիւռնիա

Տէր իմ

Թո՛ղ իմ հառաչներն ալ խառնուին Ձեր հառաչնե-
 րուն . . . թող ձեր արտունջներուն միանան իմիններս
 ալ . . . : Եթէ Ձեր հառաչները օրօրեցին Ձեր սիրական
 Վահէինդ երեզլանին . . . խոտերը, եթէ Ձեր արցունք-
 ները սառեցան Ձեր աչսց մէջ, թող անոք ընկնին Ձեր
 սրտին մէջ զովացնելու համար զսյն . . . Եթէ Ձեր ար-
 ցունքներն լուացին Ձեր սիրական Որդեակին պատանը,
 թող իմ արցունքներն ալ սուողեն նորա անյագ հողը
 . . . Բայց, Տէ՛ր իմ, ինձ բամբակ հանեցէք Ձեր հառաչէն,

Չեր տրտունքէն և Չեր արցունքէն ալ . . . վասնզի երկուսսարդ եմ, կորովի եմ . . . :

Այլ, Տէր իմ, մի լաք Չեր որդին, որու հոգին անմահ է . . . անչուչտ մարդուս միշտ կ'հեանի ստուեր մը, մահուան ստուեր մը որ թէև, աւա՛ղ, կ'ամպոտէ կեանքի արևը, բայց երբէք չկրնար հոգւոյ ցոլացումներն ալ մարեւ և Վահէի հոգւոյն ցոլացումնք պիտի մնան միշտ մեր մէջ, Տէր՛ իմ, քանի որ գերեզմանը չէ կարող այդ արևը մթագնել :

Չեզ վշտակից

Ե. ԵՂԻԱԶԱՐ

Էփրէկի 6 Օգոստոս 1897



Ազնիւ Մ. Մամուրեան

Ամենասիրելի Վահէի յետին և յախտենական նընջարանին վրայ յուսաբեկ կքուիլդ և արտօսրի թշնամի աչերուդ արտասուքի հեղեղներէ ողողուիլը տեսնելով՝ դքեզ սփոփելու ամենափոքր փորձ մ'ընել, Յոր երանելիին պէս « Աստուած տուաւ, Աստուած առաւ » ըսելով ամենհի հարուածին ներքեւ համակերպիլդ յորդորել՝ ըստ իս ոճիր մ է այս պարագային մէջ : Երօք այսպիսի կսկծաւի պատահարի մը, այսպիսի դառն ազէաքի մ'առջև քեզ վշտակցելէ, քեզի հետ սիրական զաւտկիլդ, անդիւտ գոհարիդ, մեզ՝ ամենուս սիրելի Վահէին, մահուան վրայ լալէ ի զատ ոչինչ կ'մնայ ինչպէս ինձ, նոյնպէս այն ամեն անոնց որք ճանչեր և զնահաստեր էին անոր հազուադիւտ ձիրքը : Այո՛, մխիթարութեան

խօսք մը, սփոփման ակնարկութիւն մը սիրտդ ճմլող մեծ
ու միանգամայն նուիրական վիշտը պղծելու, ասոր
սաստկութիւնը նաև վսեմութիւնը ու բանալու կամէութիւն
մը կրնայ համարուիլ:

Բարէ՛, այո՛, առին տարին Ա՛ռա՛նն որ իւր հօրն ու
մօրն անգին գանձն էր, որ անոնց կաթոգին սիրոյն և
խանգաղատանաց մշտնջենական առարկայն էր, որ ոչ
միայն քու, այլ նաև ազգին պարծանք բերող նշանաւոր
անձերուն մին ըլլալ կ'սոստանար իր բարեփասնու-
թիւններով: Ա՛հ, առին տարին թշուառ պատանին, ա-
ներևոյթ անգութ ձեռք մ'ընդ միշտ սև հողին մէջ տե-
ղաւորեց և ճակատագրին անխղելի և զարհուրելի կնի-
քովը կնքեց ու զուկեց ա՛յն կեանքը, որ ի՛նչ որ յուսա-
ւէտ խոստումներով, ա՛յն անտիական պատանին որ իր
նորածիլ իմացականութեան գանձերով և փորձառու-
թեան յատուկ շրջահայեցութեամբ և զգօնութեամբ կը
պատրաստուէր արժանի իր մեծանուն հօրն անուան
քաջորդն ու ժառանգորդն ըլլալու, որ իր հեղահամբոյր
բնաւորութեամբ, վարուց ու բարուց զիտակցարար
պահուած մաքրութեամբ և անշահասնդրութեամբ
թէ՛ քու թէ՛ Մարիամին յարաբերութիւն ժպիտն, իսկ իր
ազգականաց, բարեկամաց և ծանօթից ուրախութիւնն
էր: Ճակատագիրը մարդկային մտքէն ու կամքէն անկախ
և անողորբելի օրէնքի մը հարկն անգամ մ'ևս ուղեց
խաղալ ձեզ իր սև ողբերգութեանց ամենէն սուկային: Եւ
զու՛ն որ վերի և վարի անիրաւութեանց ստոյլկեան
արիութեամբ հախբել զիտես ի բնէ անտի, Դու՛ն որ
մարդկային կենցաղի կռուին մէջ մերթ յաղթած և
մերթ յաղթուած ես առանց սնափառութեան և ա-
ռանց վճատութեան, Դու՛ն որ նիւթական կեանքի յա-
րակից և անիմանալի հեզնութեանց և զժուարու-

Թեանց, սպառնալեաց և վտանգներու առջև բարոյա-
կան արիւթեանդ ապահնած և ջարդ կանդուն և
աննկուն մնացած ես, այսօր յոյսերուդ և ուրախու-
թեանցդ աւերակներուն վրայ, սիրեցեալ Վահէկիդ ան-
խիղճ կափառչին վրայ կը կքուիս, անոր անդարմանելի
անհետման բեռին ներքե կը ճզմուիս, կը ծնրադրես ճիշտ
այն քաջասիրտ և անահ նահապետին պէս որ իր կեանքը
ովիչանի վտանգներուն և սարսափներուն մէջ անցու-
նելէն, երկնից և երկրի սովորական բարկութեանց ան-
սարանին առջև ինքզինքն միշտ զսպելէն, տարիներով
« Մատնիչն ալիքին » վրայ անխուով և անտարբեր նա-
ւարկելէն ետք յանկարծ նաւին տախտակամածին վրայ
ծուներ կը դնէ և ձեռները դէս անհունութիւն կը վեր-
ցընէ, աղօթելու թէ ամենամեծին առջև իր փոքրու-
թիւնը խոստովանելու համար. — Երբ ինքզինքը կը
գտնէ ովիչանի ամենէն ահեղ աղէտից, ուրուականի մը
անդիմադրելի յարձակմանց և աղէտալի աւերմանց առ-
ջև ի խաւարի, անո՛ք և անօգնական . . . :

Նուիրական է արտասուքդ, Ազնիւ Մամուրեան,
մե՛ծ է նաև վսեմ վիշտդ, ինչպէս կ'ըսէ Լատին երևելի
հեղինակ մը « օտար չէ քեզ ամեն ինչ որ մարդկային է » :
— Եւ մեծ ու վսեմ վիշտերը տանելու արժանի է միայն
այն հողին՝ որ մեծ ու վսեմ է :

Իգմիր, 7 Օգոստոս 1897

ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ



Cher Monsieur Mamourian

J'arrive de Port-Saïd et j'apprends la douloureuse nouvelle du décès de votre jeune fils, qui vous frappe encore une fois. Vous ignorez en quelle sympathie et en quelle haute estime on vous tient à l'étranger, cher Monsieur Mamourian, et à quel haut degré par conséquent on a plaint ici votre infortune.

Je saisis l'occasion pour présenter à l'homme illustre, doyen de la littérature arménienne en Orient, mes hommages respectueux et mes condoléances les plus sincères.

Votre bien dévoué
Y. DÉVRICHYAN

Աղէքսանտրիա, 8 Օգոստոս 1897

Ազնուաշուք Տիար

Մասրեառ ԷՃ • Մամուրեան

Ի խոր խոցեց Ձեր 8 Օգոստոս թուակիրն և յո՛ւ, այն-
չսի մեծ է հորուստ մի որքան պատուական էր հո-
րուսեալն: Հէք Վահէ՛, այնպիսի կեանք մի նման այն
ծագիկին, որ դեռ ամբողջ չբացուած էր ցողունին վրայ,
վաղսխամո՛ւր թարչամեցաւ:

Երբ յիշեմ, դպրոցական կեանքն, երբ ընկերաց նը-

կատմամբ վեհանձնութիւնն և նամանաւանդ իր հե-
ղաճամբոյր բնութիւնն՝ կարելի՞ է շարտասուել . . . :

Մեղմատցէ՛ք, Տէր իմ, մեղմացուցէք Ձեր ցաւեր,
յի այս բաժանումն ժամանակաւոր է, է՞ր օխրիներ, երբ
կեանք մ'ալ գերեզմանէն անդին կայ կը քարոզուի, և
մանաւանդ յիշենք որ ամենքս ալ մահկանացու եմք:

Ներեցէք որ նորէն Ձեր կսկիծներն աւելցնելով՝ յար-
տասուս անդի աուի: Հաճեցէք ընդունիլ կարեկցութիւնս
և նկատելով զիս ցաւակից և նրտասուակից Ձեզ,

Նախկին աշակերտդ

10 Յոգոստոս, 1897

Քուչ - Ասայ

ԿՐՊ. Պ ՔԷՇԵԱԵԱՆ

Գաւառու Գուշ - Ասայի



Մեծ • Տէր

Եւ Բարեւար իմ Մ • Մամուրեան

Այսօր իմ տրամութիւնս և վիշտս այնպիսի աստի-
ճանի մը հասած է, զորս երևակայելը անկարելի է: Ա՛յ,
Աստուած իմ, ի՞նչ վայրկեան է եղեր այն՝ յորում տե-
ղեկացայ այնպիսի ազէտաի գոյժի մը որ բնաւ մտքես
անգամ չէր անցներ: Դժբաղդ իմ, ս՛ի չսա դժբաղդ,
Քսնի կը մտածեմ թէ ի՞նչ ողբայի է Ձեր վիճակն, եր-
բոր կը մտածեմ ալևոր ծերունի հօր մը, փափկասիրտ
մոր մը, սիրայօգ եզրօր մը դառնակսկիծ վիշտը սիրելի
Վահէի վաղահաս կորստեան վրայ: Ի՛նչ միթէ կա՞յ աւե-
րի ծանր վիշտ մը ծնողաց և եզրօր մը համար:

Չափազանց կը ցաւիմ որ իմ սկար գրիչս բռնորովին
անկարող է բացատրել իմ սրտիս մէջ բացուած վերքը:

Այս պատճառաւ չունիմ աւելի լաւ միջոց մը՝ այլ օղա-
չել զԱստուած որ նա ինքն միայն մխիթարէ Ձեզ, նա
թեթեւցնէ Ձեր անսահման և անդարմանելի վիշտերը, և
հանգուցեալն երկնային փառքի արժանացնէ:

Այս պարտականութիւնս ընելէ ամենևին չեմ դա-
դրիր և չպիտի դադրիմ, քանի որ ապահով եմ որ Ձեզ
մխիթարելը միմիայն Բարձրելոյն կարողութիւնն է:

Ձեզ վշտակից

Վենետիկ 11 Օգոստոս 1897

Յ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆ

Վարժարան Մուրատ - Ռափայէլեան



Մեծապատիւ Տիար

Մ. Մամուրեան էժէնիսի

Զմիւռնիս


Մխիթարական բառ չեմ գտներ Ձեզ գրելու Ձեր
գառն կորստեան վրայ զոր ունեցաք յանձին Ձեր հա-
րազատին, Վահէի, այլ միայն որտի խորէն իմ ցաւակ-
ցութիւնն ու վշտակցութիւնն կ'յայտնեմ Ձեզ և Ձեր
ամբողջ գերզաստանին:

Փոխան ծաղկեփունջի ներփակեալ կը դրկեմ երեք
մէճիտի փոստայի փուլ, հաճեցէք նուիրել զանոնք Որ-
բախանամ լ'նկերութեան:

Մնամ անկեղծ վշտակից Ձեզ

Պամակոս 16 Օգոստոս 1897

ԽԱՋԱՏՈՒՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ



Մեծասյուսիւ Տէր

Շատ ցաւ պատճառեց մեզ Ձեր երիտասարդ որդւոյն, Սղնիւ Վահէի, վաղահաս մահը, որուն չքնաղ ձիւքերն և ընտիր ընտիր յուսկութիւնները — որք իւրոյ և ի համբաւոյ ծանօթ էին մեզ — այժմէն կ'ստատանային իրենն փառաւոր ապագայ մը և հանրօգուտ կեանք մը, բայց մահուան անգութ խորշակն, որ չխնայեր ոչ նորափոխի ծաղկանց և ոչ մրգալի ծառոց և միահաղոյն կը հարուածէ ինչ որ հանդիպի իւր քայլից, չխնայեց նաև Ձեր ծաղկահասակ որդւոյն և թարլամեց զայն իւր կուսն տարիքին մէջ, ու այսպէս մեր բոլոր յոյսերն ու իղձերն և անոր համայն խորհուրդներն ու երազներն սև հողոյն տակը մարեց:

Աեանքեր կան, որոց կորուստը միայն իրենց համար տխրալի կրնայ լինիլ, զի այնպիսեաց գոյութիւնն ու աշխատութիւնն իրենց վրայ միայն կ'կեդրոնանայ, կան ալ, որոնց կորուստի վրայ ծնողք և ազգականք միայն կ'ողբան, սակայն կան նաև կեանքեր, որոց այս աշխարհէ հրաժարումը Սզգ մը ամբողջ ի խոր սուգ կ'համակէ: Ձեր որդւոյն կեանքը այս վերջնոց կարգին կ'պատկանէր, Ձեր իմաստուն դաստիարակութեանն ու խնամքին տակ մեծցած, սիրովն ու գորովովն սնած էր, այնքան ստոյգ է թէ՛ (որդի հարազատ բերէ զնմանութիւն հօր) այնքան ճշմարիտ է թէ՛ արծիւին ձաղն միշտ արծիւ մ'է: Արկինք որ կ'տխրի աշխարհի վրայ երևցող շատ մ'անօգուտ կեանքներու համար, ուզեց թերևս ինքն ալ տխրեցնել զմեզ վերցնելով մեր մէջէն հանրօգուտ ըլլալու սահմանուած կեանք մը:

Անկարելի է չ'իտիծ ալ, անկարելի է չ'ող ալ այսպիսի կորուստի մը վրայ, սակայն ինչ այսպէս աղկկղ ցաւերու մէջ արորուած կ'մտնանք զմեզ և ամեն բան՝ յանկարծ քաղցր և վափաքելի ձայն մը կը հնչէ մեր ա-կանջին թէ անոնցը կորուստ չէ այլ վերլուծիւն, մահ չէ՛, այլ կեանք, թէ նոքա որոց սրտին մէջ հաւատքի կայծ մը կայ պիտի առաջնորդուին այս վշտաց հովիտէն՝ անվերջ և անցաւ աշխարհ մը, ուր արեւը շմարիր, ուր կեանքը շմեռանիր, որքան մխիթարութիւն չ'ընորչեր մեզ այն աստուածային խոստումը, զոր արտասանեց Նս որ տէր է մահու և կենաց « Ես եմ՝ յարութիւն և կեանք, որ հաւատայ յիս թէպէտ և մեռանիցի կեցցի »:

Մխիթարուեցլք և Դուք. Տէր Մամուրեան, հաւատա-լով թէ Ձեր սիրեցեալ որդին յանձնեցիք ոչ թէ կար-ծուածին պէս սև ու պաղ հոգին, այլ անոր որ պատ-րաստ է հանդէհեցնելու « զվաստակեալս և բեռնաւորս » որ զիտէ առաքել զՍուրբ Հոգին մխիթարիչ և զօրա-ցնել զմեզ հանդէպ մեր ցաւոց և վշտաց:

Երկինք զօրավիզ լինի Ձեզ և Ս. Հոգին մխիթարիչ,

Առաջնորդական տիպարան

Ստանա, 17 Օգոստոս 1897

ԽԱԶՍՏՈՒՐ Վ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Յարգելի Խմբագիր Տէր

Փարիզի Հայ Աւսանողական Միութիւնը ցաւ ի սիրտ իմանալով Ձեր սիրասուն որդիին, վաճէ Մամուրեանի մահուան զոյժը՝ խորապէս զգածուած կուզայ իր վիշ-տը խառնել Մեծանուն զրազէտին, ալիքարդ Ինչպազ-

րին և սգաւոր հօր արցունքներուն հետ՝ որ կը թափին սիրալի վաւակի մը հօղակոյտին վրայ և անոր . . . յիշատակին:

Հաճեցէք ընդունիլ ուրեմն, վշտահար հայր, Փարիզի Հայ Աւսանողութեան անկեղծ ցաւակցութիւնը:

Ի գիմաց Փարիզի Հայ Աւսանողական Միութեան

Ա.Տ.Ե.Ն.Ա.Կ.Ե.Ս. Կասն Ա.Տ.Ե.Ն.Ա.Կ.Կ.Կ.

ՏԻԳ. ԵՍԱԵԱՆ ԅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՒՐՇ

Փարիզ 19 Օգոստոս 1897



Որդեկորոյս Մայր


Դուք և Ձեր մեծանուն բազմաշխատ այրն ազգակցական շրջանէ դուրս, ունիք յոգնաթիւ բարեկամաց լէզէն մի, որոնք կ'ըրթնեն վաղամեօրիկ Վահէի սուզն իրենց մէջ:

Մնամ Ձերդ ի սրտէ վշտակրող

ՎԱՐԴ - ՎՐՈՅԲ

19 Օգոստոս 1897

Պօսթն - Ամերիկա



Մեծ. Պրն. Մ. Մամուրեանի
Տեր և Տնօրէն «Արեւելեան Մամուր»
Պատուական Հանդիսի

Ի Քաղաքին

Մեծարոյ Տէր

Քանի՛ դժբաղդութիւն է ինձ անագան ուրեմն առնելով Յուլիս 15 ի մեծ — գոյժն . . . , այն աղէտօրեր օրուան՝ յորում ապագայ մեծ անձնաւորութեան մը արևը կ'իսաւարի, էակի մ'որու հայրը կը գտնուիք . . . դժբաղդաբար, որու կորուստին ոչ ոք կրնար անտարբեր գտնուիլ և որու վաղա՜ստ մահուան առթիւ եկած եմ ոչ թէ մխիթարական սին խրատներ շնայելու, զի ես պէտք ունիմ, զի ես ինքս պէտք կ'զգամ Ձեզ լսել և Ձեզմէ սորվելու՝ ինչպէս երբեմն, այլ կ'գամ պարզապէս իմ ցաւս և մորմոքս յայտնելու արտասուագին, ցաւոց և հեծութեանց աչխարհէն . . . և տառագանքի անկողինէս, ուր կ'գտնուիմ ժամանակէ մ'ի վեր, դողօջուռն ձեռներս գրելով այս սոզերը, այս ամենուն սիրելի հըրեշտակային էակի մը կորստեան համար . . . :

Ո՛հ, Մեծարոյ Տէր, բնական է որ մեծ կորուստները մեծ ցաւեր պատճառեն և վաղամեռիկն Վաչէի կորուստըն սոյն կարգին կ'վերաբերի, թէ և ինքը տակաւին մատաղ հասակի, երիտասարդական գեղածիծաղ առաջին դարունին մէջ, բա՛յց . . . մե՛ծ էր նա հոգիով, մե՛ծ միտքով, ուրեմն տրուած հարուածը կարելի չէ՛ր նաւ ուրիշ հարուածներու համեմատել, զի նա Ձեր փա՛ռքն էր՝ իրր արժանաւոր զաւակ Ձեր, նա կ'ազդէր իր բարեկամներուն և ծանօթներուն ուրախութիւն և

զմայլումն, և ահա՛ մէկէն կ'դադրի էութենէ՛ դոցելով
 դուռն այն Մեծ - Ասլագային, անգութ Պարկայից կե-
 նազրաւ մկրատը շուտ խակ կը կարձէ նորա յուսալի կե-
 նաց թելը՝ դէս ու դէն սփռելով ցաւ և վիշտ . . . : Ահ,
 որքան դժուարին է կրել այս ցաւը, տանել այս փշտը .
 քանի՛ որ ուրիշ մը դեռ մտոցուած չէր . . . ինչպէ՛ս ա-
 մօքել սոյն դառնագին կակիծը . . . :


Երկնի՛ց մխիթարութիւնը կ'հայցեմ, ո՛ր Մեծարոյ
 Տէր, թէ Զեյ թէ Զեր ազնիւ և մեծահոգի տիկնոջ և
 թէ նորա սիրեցեալ հարազատին, Պարոն Հրանաի, զոր
 գուրգուրանքով կ'սիրէր. և կ'դադրիմ գրելէ, զի թէ
 տկարութիւնս և թէ տկար գրիչս չեն ներեր աւելին,
 սակայն միշտ սրտիս մէջ պիտի մնայ անզուգականն
 Վահէի . . . անմոռաց յիշատակը . . . նորա զոր, չեմ
 գիտեր ինչո՞ւ այնքան սիրած էի և որոյ տեսութիւն այն
 քան բերկրանք և հաճոյք կ'ազդէր ինձ: Եղու՛կ գնաց . . .
 այլևս չը դառնալու պայմանաւ . . . անողո՛ք մահ . . .
 անողորմ՛ ճակատագիր . . . : Ունայն աշխարհ . . . :

Միշտ Զերդ վշտակիր

ԱՇՈՏ Գ. ՔԷՇԻՇԵԱՆ

20 Օգոստոս 1897

Ազգ. Հիւանդանոց



Վշտակոծ Տէր

Զեր աչքի յոյսը Պրն. Վահէի մահուան լուրը հասաւ
 և ազդեց ամեն անոնց՝ որք կը կրեն ճշմարիտ հայու մը
 սիրտը, ծակեց և ի խոր դրսշմեց կակիծ ամեն մարդու
 սրտի մէջ, որք թէ հեռուէն ու մտէն Մամուրեանը կը

ճանչնային և կը ճանչնան: Կ'արիւնիք բնական է, Որդե-
կորոյս Հայր, զի կորուստն անդարմանելի է . . . Ես չեմ
տեսեր Ձեզ և Ձեր հոգեհատորը պարզ աչքովս, բայց
հաւատացէք որ ունէի զոյգ մը հոգեկան աչքեր՝ որոցմով
չատ յստակ կը տեսնէի ու կը ճանչնայի զՁեզ, սէտք է
խոստովանիմ որ Ձեր երեսը լուսաւորող շողին ազդե-
ցութիւնովն աւելի:

Որքան ալ գիրքով իրը հրապարակի մարդ՝ աննկա-
տելի և անձանօթ լինէի Ձեզ, չէի կրնար չկատարել
այս տխուր պարտքս երկտողովս ի յիշատակ Ձեր վաղա-
թառամ ծաղկին . . . մի բան շատ աւելի կը մզէ զիս
յայս կէտ համարձակութեան՝ այսինքն մօտէն չճանչ-
ցողի մը հետ խօսելու մասին, այն է որ տառապած,
արորուած և ունայնութեան դասեր սերտած եմ, որով
կը մօտենամ Ձեզ այս տխուր պաշտօնակատարութեամբն,
և որու առիթը կը ներկայացնէ մահուան անգութ հը-
րեշտակը որ յափշտակեց Ձեր սիրասուն Վահէն . . . :

Չունենալով բառ մ'անգամ զՁեզ մխիթարելու այդ
թանկագին ու անդարձ կորուստի մասին, միայն խըն-
դրեմ եղէ՛ք այնքան բարի շնորհելու ինձ բաժին Ձեր
սիրտն ու հոգին կրծող ու մաշող ցաւերէն և վշտե-
րէն . . . :


Յուսով եմ որ կ'ընդունիք անպաճոյճ պսակս ի շարս
այլոց . . . :

Վ. շտակից

Ս. Եջմիածին՝ 21 Օգոստոս 1897

ՄԿՐՏԻՉ ԵՐԿԱՐԱԿԵՑԵԱՆ

Ի Վանս Քայնանեայ



Մեծ • Մասքէնու Էժ • Մամուրեան

Զմիւռնիս

Սգակիր Տէր

Սիրասուն վաղամեռիկ Վաչէիդ դառնաղէտ մահուան առթիւ երբ Հայ հասարակութիւնն համակրական ցոյցերով կ'մերձենայ Հայ գրականութեան ակեղարդ վաստակաւորիդ՝ կիւրին անտարբեր չմնար:

Ձեր կորուստն յանձին չնաշխարհիկ հոգւոյ մը՝ արդարեւ խիստ թանկագին է, իրա՞ն է որ մահն իւր զոհերըն ընտրելով կ'ընէ, Վաչէ մեծանուն Մամուրեանիդ անմահացուցիչն լինելու կանչուած էր, նորաթիթի ճանճար մ'էր նա, և որ մը նոր Մամուրեանդ պիտի ողջունէիք յանձին սղբացեալ սիրահատորիդ: Արդէն յուսալից քայլեր կառնուր գրական ասպարեզի մէջ և Ձեր պանծալի անուան և փառաց արժանաւոր յաջորդ սահմանեալ էր յերկնուստ, որ աւա՛ղ խորշակահո՛ր կ'սամբիտարածամ, թող ողբայ անմխիթար ուրեմն հայ գրականութիւն, զի կորո՛յս առ յաւէտ հէքն Վաչէն, իւր խոստմնալից մշակն: Թերեւս շատ ուշ նկատուին մեր սոյն վշտալից տողերն, այլ ո՛չ, դեռ երէկ էր որ կարդացինք պատուական հանդիսիդ մէջ վաղաթարշած Վաչէիդ մահն գուժող արտասուալից տողերն: Վշտահար հօրդ և սեւազգեստ մօրդ նուիրուած մխիթարականներու կիւրին ևս հաղորդ է՝ երանական հանգիստ մաղթելով Վաչէի հոգւոն:

Ընդունեցէ՛ք, Տէ՛ր, և մեր արտայայտած համակրա-

լիք գղացմանց հաւաստիքն և միտիժ արուեցէ՛ք այլ ևս
Տարարազդ Վահէիդ անժամանակ մահուան կ'վըշ-
տակցին:

Ի Դիմաց Խնամակալութեան

Ա.Տեևսպէտ

Ա.Տեևսպիտ

ՄԱՆԱՍէ Ս. ԿՐԵՈՂԵԱՆ

ՅԱԿՈՒԲ ԳԸԼՊԱՂԵԱՆ

Կիրիւն, 21 Օգոստոս 1897



Մեծաշուք Մասքէնու ԷՔ • Մամուրեանի

Տնօրէն - Խմբագրապէտ «Ա. Մամուր» Ազնիւ Հանդիսի

Զմիւռնիս

Սղացեալ Տէր

Վիշտեր կան — Զերինն անոնցմէ է — որոնք միայն
ընտանիքի մը անդամներուն վրայ չեն եզրածայրիր, այլ
կը սաւառնին տխրազդեցիկ՝ ամբողջ բազմութեան մը
վրայ, դագաղը թէպէտ դրուած դառնակակիժ հօր մը,
աղեկ՛ղ մօր մը և բոլոր արցունքաչուի ընտանեկան
հայրին միջև . . . :

Եւ հիմայ Դուք է՛ք, Մեծանուն սգաւոր, որ այս հը-
րապարակային մօրմաքին վշտամեծար առարկան էք
դարձեր, Դուք որ Զեր 21 տարեկան կարիճը հողն էք
գրեր: Զէ՛ք Վահէ, Զեր սրտի սեղանին վրայ իր բու-
րումնաւէտ խնկումներուն մէջ չուտ թառամիկ ծաղիկ
եղաւ, որու չիրցին դարնան ու կեանքի հիւթը վերըն-
ծայել հայրական ու մայրական էն խոր աղիքներէ բըր-
դած ջերմին արցունքներ, այլ վիշտած ու թափած այն

կեանքի բաժակին տեղ՝ որ նոյն ինքն Վահէի բարա-
խուն սիրտն էր կարմիր սիրով փրփրուն, խորհրդանշա-
նեցին լեցնել մահուան սև բաժակը, հոգևորին ու սը-
ղաւորին միջև դրուած յետին ձօն եղերական, առաջ-
նոյն քրտինքէն և վերջնոյն արցունքներէն բաղկացած
. . . : Ե՛հ, ապրող մարդուն մեծագոյն տրամութիւն-
ներէն մին է այս որ Ձեր զգայուն սրտին ալ բաժինն
եղաւ. ինչպէս չսխրանան ուրեմն բոլոր այն երիտա-
սարգէները, որոնց 50 - 40 տարիներ Գուք ուսուցիք շատ
զգալ ու շատ խորհիլ, ինչպէս շատայ չընեն Ձեզի մխի-
թարութիւններ ընծայելու: Մխիթարութիւն, թերևս
աս չկրնար ընծայուիլ, այլ որ կուզեն ընծայել, թե-
րևս ա՛ս ըլլայ մխիթարութիւնը: Ամենուն սէրը, ա-
մենուն մողթանքը կամ Ձեր վշտին մէկ արձագանքը
հեռուներէն Ձեզի բերուած թերևս կը փակէ չըջանակը
որուն մէջէն տրամութիւնը, ջլատիչ էլեկտրականու-
թիւն, կը հոսի կ'աւարտի: Կարելի չէ՛ր արդեօք որ նոյն
իսկ վերականգնանացած համարինք Վահէն այն երիտա-
սարգ սրտերու մէջ, որոնք հիմա դէպ ի Ձեզ դարձած
են, այս յորդումը դէպ ի Ձեզ, առիթ չտա՞ր որ տեսնէք
թէ Գուք Ձեր գրքերով ու մտածութիւններով որչափ
ծնունդներ դրած էք մտքերու մէջ, թէ բոլոր այս ծը-
նունդները նոյնչափ Վահէներ են, կամ ուրիշ կերպ մը
վերագոյութիւն. չէ՞ր բաւեր ամենուս մտքին մէջ եղած
այս ցաւազդին ըմբռնումը, թէպէտ ցաւ ինքնին. Վահէն
չէ՞ մեր ամենուս միտքին մէջ առհուած, հազար անգամ
աճած մտաւոր էութիւնը, Վահէին, խօսուն, գնայուն,
փարելի Վահէին, յաջորդ, և այսպէսով ո՞ւր է չէու-
թիւնը: Ա՛հ, չէ՞ որ ամեն ինչ կերպարանափոխութիւն
մը կ'երևի մեզի, մարմինները խորհուրդներու կը փո-
խուին և խորհուրդները մարմիններու: Վակայն բոլոր

ասոնք գաղափարներ են, Տէր, թէ՛ այն Վահէները որ Ձեր մտքին ծնունդներն են, և թէ՛ այն ցաւ — յիշատակ Վահէները, մինչդեռ Ձերինը որդի մ'էր, պատուուած սրտէ մը ժայթկած արիւն . . . : Ի՞նչ է որդին, խորհուրդ մը, մարմի՞ն մը թէ՛ հոգի: Հայրն ու մայրը, ծընողը միայն գիտէ զայս: Այն ցաւատանջ ամբողջը միայն՝ որ գալարած աղիքներով մահուան բաժակին կը նայի, կրնա՞յ պատմել սրտի բառին խորունկութիւնը և և ըսել թէ՛ բաժակը լեցուն ցաւով ու մահով, բայց ունայնութիւններով ու խոսքով չէ՛ երբէք: Ո՛չ, մահը և ցաւը ունայնութիւններ չեն: Անոնք կեանքի կողերուն քով դրուած, թեթեւ բանականութիւնը կ'նժարեն, անոր չեղու մեերն ու ոլորտանքը կը սանձեն և թէպէտ մթին արահետէ մը, թէպէտ սկրզելով միտքը, բայց վերջապէս կը քաջէ կը տանի բանականութիւնը որոշեալ տեղ մը:

Հայրութիւնը ինք պիտի ըսէ թէ՛ ո՞ր:

Աեանքի խորհուրդին հետ կնքուած պայմանագրութիւն մը, տարբեր բան մըն է հայրութիւնը քան մենիկ մարդկութիւնը՝ որ մտածութեան շնչովը կ'ապրի: Հայրութիւնը հերկ մըն է մարդութեան մէջ և երբ այդ հերկը փայփայիչ ի սկզբրան, հետզհետէ տանջանագին դառնայ մինչ սահմանները հասնի, այն ատեն մարդ մը հայր կ'ըլլայ, որ իր բացուածքներն ու պատուածքներն ունի: Այնցեր, խորացեր, տարածուեր է նա այլ ևս և բանականութիւնը, անբաժան ընկեր մարդուն, անոր այս նոր ու մեծածաւալ համեմատութեանց (dimension) քովը ի վեր կերկարի ուր որ ալ հասնին անոնք:

Ուստի Դուք մեզի պիտի ըսէք հիւս, ո՞վ վշտացեալ Տէր, թէ սգաւոր հայր մը ամեն բա՛ն է առաջ կրօնքը:

չունի՞ մխիթարուելու համար. — քանի որ ինքն ամբողջ կրօնք է. — թէ պէ՞տք է Անժանօթին գաղտնիքներուն դիմել անոր սղորհունքներէն զովու՞թիւն և արևներէն լոյս բերելու համար, թէ որդեկորոյս հայրը ամեն բանէ աւելի գերազայն ծանօթը չունի՞ որ ինքզինքն հայր յայտնած է բոլոր գինք սիրողներուն և որու քով կ'երթայ հանդէիլ ամեն որդի:

Աւա՛ղ, երբ Ա,ահէի պայծառ ճակտին դժգունիլը կը տեսնէիր, անոր քաղցրահնչիւն ու պերճիմաստ գրոյցը հեռագնեակ կը նուազէր ու աչքի հօւրը կը մթագնէր հէգ Ա,ահէին, որու վրայ լալու առթիւ միայն իմացանք թէ քանի՞ կեանքի արժանի էր, հոգիդ չէ՛ր գրո՛ւ տար այս բոլոր գեղասգմայլ նահանջողներուն ետեէն գիտնալու համար թէ ո՛ւր կերթան Աւ օր մը վերջապէս, երբ խարուսիկ փողփողումէ մը յետ, սև գիշերն ինկաւ Ա,ահէին վրայ, ու ամեն ինչ լմնցաւ, այն ատեն Ձեր հոգին անտարբեր մնա՞ց այս արհաւիրից խաւարին մէջ, թէ չէ թե առաւ կեանքի հատած սահմանագլխէն և յոգնատանջ սուղեցաւ վի՛ն մէջ ի խնդիր Ա,ահէի: Աւ ետ դարձա՛ւ արդեօք մինչև շլսեց անոր ձայնը որ հեռաւոր պայծառութեան մը խորէն իրեն կը հնչէր առաւօտող ժամերու մէջ, մինչև չտեսաւ անոր ժպիտը՝ որ մթութիւնները ճեղքելով անդենական եզերքէն իրեն կը ծագէր:

Անտարակոյս կեանքը մինչև վերջին սահմանագլուխը ապրիլ մը կայ, ուր վի՛ն մը առջևը կ'հասնի մարդ. և ուր կեանքի նեղ պարիսպները կ'տեսնէ շրջապատող լայնածաւալ անդունդին մէջէն տխեղձ վեր ելած: Հոն սիրաբ կը վայէ, Ա,ահէ՛, բայց որովհետև մահուան պէս հզօր բան մը ունի իր մէջ. — Սէրը, — յանդուգն կը

մխրճի մահողորտ անդունդին մէջ, ուր թերևս, լսեմ
Գոլորմայոս, գտնէ մխիթարութեան երկիրը, Աստուած
խաւարի ովկէանին մէջ ծածկուած ճշմարտութեան
աիեզերք :

Այսպէս կ'ապրի հայր մը և ինտո՞ր մահուան մութին
մէջ Զեր սրգւոյն ցնդելը, ոչինչի վերածուիլը տեսնէք:
Ի՞նչ, այնչափ ոչինչ բա՞ն մըն է եզեր այն զոր Որդի
կ'անուանենք, այն որ սէր կը բարբառի ու ճշմարտու-
թիւն կը մտածէ: Ո՛չ, ո՛չ, եթէ այդպէս ըլլար, ինչո՞ւ
ուրեմն կսկիծը կրժէր սրտիդ խորչերը, ինչո՞ւ խոցը
միշտ արիւնէր: Արմատէն բաժնուած ոչինչ մը կրնա՞ր
իր արմատին վրայ ամեն ինչ թողուլ, այսինքն կեանքի
լեցուն ցաւը: Սակայն եթէ անուշ մեղութիւն մը խառ-
նուած է սգաւորին երեսի տրտմութեանը, եթէ ալ իր
արցունքներուն մէջ մխիթարութեան զսփութիւնը կայ,
սլաճածան այս շէ՞ թէ մութ ճամբէն անդին տեսած է
իր սիրելին պայծառութեան ախունքին վրայ կանգնած:

Ահա՛, Մեծանուն Տէր, սգաւորին անդրամահ նշմա-
րումները, բանականութեան մէկ երկարածգումն են
կարծես, միտքին նայուածքը աւելի հեռուն տարուած,
զի մահը կը սրէ ու կը սրէ բանականութիւնը անոր էն
կատարեալ և առածնանեղ գծին վրայէն քաշելով զայն:
Ինչ է միաքը արդարև, եթէ ոչ հսգւոյն հեռադիտակը
տեսնելու համար ինչ որ հեռին է ու խորը, երկինքնե-
րուն մէջ պլպլացող աստղին կտրած ճամբան և հիւլա-
կան անասնիկ մը սրտին խորը: Միաքն է որ կը տեսնէ
նաև ինչոր բնաւ շերեի, թագունը, բացարձակը, ճըշ-
մարիտը: Որպէս զի այս բացարձակը մինչև Աստուած,
այս ճշմարիտը մինչև հանդերձեալ աշխարհ և անմա-
հութիւն ծայրայանգուած տեսնէիք, սէտք էր որ հզոր
ձգողականութիւն մը ազդէր մեր մտքին: Արդ մեր սի-

բելիները մեր էութենէն վրթած հատուածներ չե՞ն,
որ կեանքի սահմանէն անդին տարախօսելով իրենց ե-
տեւէն կ'քաշեն ու կ'քաշեն մեր պրկուած բանականու-
թիւնը:

Ինչ որ ալ ըլլան, Տէ'ր, այս ամենը, արամաստնու-
թիւն թէ տարախօսութիւն, կէտ մըն ալ ու խնդրե՛ք
պիտի որ Դուք իսկ մխրթարէք զմեզ:

Մեծ միտքերը, ճոխ հոգիները ժողովրդին ձրկ-
տումներն են զէպի կատարեալն ու գեղեցիկը: Անոնք
իրենց հանձարին հազար փողփողումներովը կ'ըմբանեն
ու կը ցոլացնեն զոյսութեան լոյսերն ու կեանքի ճշ-
մարտութիւններն: Այսպէսով անոնք ժողովրդի հորի-
զօնին վերեւ թափանցիկ մթնոլորտ մը կը կազմեն: Ինչ
որ կանցնի իրենց մէջէն, կը լուսաւորէ կամ կը մթազ-
նէ վարը ակնապիչ կեցած մահկանացուները:

Ինչ կըլլան այդ մեծ միտքերը երբ լուսաշող զլուս-
նին վիշտի փոթորիկներով ծեծուի ու արցունքը կայլակէ
իրերու խորը տեսնող անոնց աչքերէն: Միածան մը կիյ-
նայ իրենց վրայ ուր ճշմարտութեան ակնադարար և ըս-
փոփիչ զոյները պարզուած ըլլային ժողովրդեան: Եթէ
այս՝, ահա արտում բազմութեան լոյսն ու սիրտը: Եւ
հիմա, Գուք, Ազգին մեծ զբաղէտը և իմաստասէրը, որ
երբեմն կ'օթի միջոցով միայն թարգմանիչո՞ւ, այլ
թարգմանն ալ էիք անոր համայնաթոիչ հանձարին և
որ ամերու հետ յառաջնութաց, Ձեր մտածութիւնները
սրեցիք ու խորացուցիք Շահնուրի երկայնքն ի վայր, ա-
ւա՞ղ վշտի խորհուրդին դէմ գօտեմարտող դիւցապն մը
էք հիմա, օրուան Մէտէօրա մը, ուստի մոռցէք պահ մը
Ձեր վիշտը և Մէտէօրան թող լուսաւորէ զմեզ բոլոր
սղաւորներու Ընէք մեզի առ Մահուան գիտութիւնն
ալ հետզհետէ յառաջդիմութիւն մը շնն՞ք, անոր հա-

մար ալ չէ՞ բարեչրջութեան օրէնքը: Ա՛րբ մահը կը
հանդիպի ժամանակի ընթացքին մէջ էն խորատեսնե-
րուն բոյնը յայանութիւն մը չի՞ թողուր հոն, գաղտ-
նիք մը չի՞ կորզուիր իրմէ: Դուք՝ որ այս վիհերուն խու-
ղարկուն եղաք, ըսէք մեզի սգաւորներուս կայ բան մը
մահուան մէջ որուն համար բոլոր որդեկորոյսները և
հայրակորոյսները իրենց խորունկէն ըսեն, «Ամէն»:

Ահա՛ թէ ինչ պիտի ըլլար ճշմարիտ բերկրանքը մեր
լացողներուն :

Ի վերջոյ նուիրելով, Տէ՛ր, Ձեզ և Վահէի վշտացեալ
մօր, Ազնիւ Տիկին Մամուրեանի, խորին ցաւակցու-
թիւններս:

Մնամ ջերմ յարգանք

22 Օգոստոս 1897

Խարբերդ - Մէզիրէ

ԽԱՉԻԿ Պ. ՔԵՕՍԷԵԱՆ

Սգակիր Խմբագրացիէս

Անհնար է չցաւակցիլ Ձեր սիրեցեալ և վաղամեռիկ
որդւոյն՝ Վահէի վրայ, որ Ձեր արժանաւոր յաջորդն,
համայն Հայ Ազգի ի մը ապագայ գրագէտն ըլլալու կոչու-
մէն ունէր:

Մնամ վշտակցող

Պոսթնն 24 Օգոստոս 1897

Տ. Պ. ՔԱՇԷԱՆ

Հարևաստիայի Տիկիկն Մամուրեան

Սղացեալ Մայրիկ


Անբացատրելի տխրութեամբ լսեցի ողբացեալ մահը Վահէ Մամուրեանի: Արատասուած որ աչերով կը համբուրեմ այն սև և թարմ շիրիմ՝ որոյ տակ կը հանգչի մեծ և սլաշուելի հրապարագրիարժանաւոր որդին: Ողջոյն Հայ երիտասարդութիւնը Ձեզ հետ սգոյ մէջ է: Ձեր վշտալից սրտին մխիթարութիւն կը հայցենք Ամենաբարբի Արարչէն և երկար կեանք Ազգին սլաշուելի Մամուրեանի և նորա արժանաւոր գերդաստանին:

Կը մնամ խօնարհաբար Ձեր ցաւոց ցաւակից

26 Յոստոս 1897

ՎԱՀԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Նոր Երիտանեա - Մ. Նահանգ



Մեծ • Մասքէոս Էժ • Մամուրեան

Զմիւռնիս

Վշտացեալ Տէր

Ձեր սիրեցեալ Վահէի մահուամբ Մամուրեան գերդաստանի կրօն դառն կորուստը մեծապէս վիշտ պատճառեց և ինձ:

Արդարև ինձ անգութ և տխրառիթ է մահը՝ նորա աւերիչ մանգաղն հաւասարապէս կը կտրէ աշխոյժ երիտասարդի և թէ անպօր ալեորի կենաց թելերը, նա դուռ ու դադար չ'դիտեր, կ'գործէ ու միշտ կ'գործէ և

այս հանուցալ շարժմամբ ինչ մեծ յեղաշրջ խունք յա-
սաջ կը բերէ, աւերալ կը դարձնէ այն գեղակերտ բոյ-
նը, ուր քիչ մ'ասաջ թոշունը սկր կերպէր, արասուաց
աղբիւր մը կստեղծէ այն աչաց մէջ՝ ուր պահ մը չկար
որ՝ անհուն սրախութիւն մը կը փայլէր և վերջապէս
վշտաց ովկէանի մը կը փոխէ այն սրտեր՝ որք երբեմն լի
էին սրախութեամբ:

Սակայն ինչո՞ւ այսքան խոժոռ կը նայինք մահուան,
է՞ր այնքան սխալ գաղափարներ ունինք իւր մասին, մի-
թէ մահը յաւիտենական կորո՞ւստ է, միթէ գերեզմանն
մարդկային մարմիններն լափող անկուշտ փո՞ս մ'է՛րբը.
նաւ երբէ՛ք, մահը ոչնչացում չէ այլ լրկ կերպարանա-
փոխութիւն, գերեզմանը փոս մը չէ այլ անձուկ դուռ
մը որ կ'ասսջնորդէ դէպի՝ յաւիտենականութիւն, դէպ
ի Անձանօթն, որոյ գործերը միշտ ու միշտ բարի են,
սակայն մեզ մահկանացուացս ստէպ անիմանալի գաղտ-
նիքներ են, և միթէ նոյն իսկ Ինքն ալ գաղտնիք մը չէ՞:
Հետեապէս Աստուածային ամեն գործոց մէջ բարու-
թեան մը գոյութեան հաւատալ մեր պարտականու-
թիւնն է:

Արդ՝ մխթարուեցէ՛ք և մխթարեցէ՛ք ձերինները,
վշտացեալ Տէր, քանդի Ձեր հոգեհատարն կենդանի է և
պիտի ապրի յաւրտեան, նա իր մահուամբ անմահու-
թիւնը գրկելով այժմ՝ շրջապահաց դասակից կը գեղգե-
ղէ յունկն Անմահին Սաղմոսերգուի սա վսեմ խօսքերը
«Տէր, դի ահեղ և բարի են գործք քս » :

Ար մաղթեմ որ Բարձեալն զՁեզ և Ձեր աղնիւ գեր-
դաստանն պահպանելով, երջանիկ և բարեբաստիկ օրեր
չնորհէ:

Մեամ խորին յարգանօք

Մեծ և Սիրելի Մամուրեան

Մեք ևս անաղան ուրեմն մեր խորին վշտակցութիւնն կը յայտնենք Ձեր պատուական Որդւոյն մահուան վրայ և երկնային մխթարութիւն կը մաղթեմ Ձեզ համար :

26 Սեպտ. 1897

Ենի - Պիւզ

Մնա՛ք միշտ յարգանք աղօթարար
ՅԱԿՈԲՈՍ ՎՐԴՊ. ՇԱՀՊԱՂԼԵԱՆ



Գերազնիւ Բարեկամ

Ձերսի տագնապներուն մէջ ինչ կը գուժեն ինձ այսօր, թէ Ձեր սիրասուն վաճէն, վա՛հ, ծաղկափթիթ և փայփայելի փող մէջ կորցուած է Ձեր սիրաբոյր գրգուանքներէն, թէ չիջած է՝ մտրած է՝ վա՛հ, վաճէի կենաց անուշ արերը :

Ձեմ կարող գրչով բացատրել Ձեզ թէ սոյն ծանր հարուածը սիրաս օրքան խոր վիրաւորած է, ինչպէս որ Ձեր ծնողական սրտիկը կարեւի՛ք խօսուած է և յորդահոս արեամբ ողորուած է : Անկարելի է լոկ մխթարական խօսքերով Ձեր գառնազէտ միշտը թեթևցնելու ձգտիլ, այլ կուգամ ոգրալ միայն և իմ արտասուքս ալ խառնել Ձեր արտասուաց և թանալ այն գերեզմանն ուր կը հանգչի Մամուրեան դերգաստանի հողեղմայլ հրեշտակն, հրճուանքն ու երանութիւնն, Պէրպէրեան բարեհամբաւ վարժարանի պանծալի աշակերան, նորո-

բողոքով բանաստեղծ գրող է տն, և ծագլահանուսակ իմաստունն որ իւր սքանչելի հօր նման Հայ գրականութեան բեղմնաւոր վաստակաւոր մը ըլլալու յոյսերը կը ներշնչէր . . . բայց կարելի՞ է միթէ անզուգական Վահէն իրր բուրովին մեռեալ նկատել, ո՛չ ո՛չ. Վահէ արժանացաւ երկնային անթառամ պսակին, Հայոց մե՛ծ վարդապետին սա մե՛ծ խօսքը միայն Ձեզ յիշեցնել բաւ կը համարիմ, Ե Մահ ո՛չ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է, ուրեմն Վահէի ողին հրեշտակաց հետ Անմահին զահայց շուրջ թեւածեալ քալելու է այժմ երգելով օրհնէ՛ք երկնից և աղօթելով իւր ծնողաց և սիրելեաց համար: Ա՛յ ապաքէն Ձեր հոգեշունչ սկզբունքներն գրաւական են թէ Ձեր ընտանեկան բոլոր թախիժք և վշտերն ու տարիներն անզօր պիտի լինին մարելու Ձեր քրիստոնէական անզուսպ եռանդն և աւերի կամ նուազ ներգործելու Ձեր վրայ: Քանի՛ վիրաւորեալք, քանի՛ վշտահարք իրենց խոցերուն և վշտաց բալասան գտած են Ձեր կէս պարէ ի վեր հրատարակած ընտիր երկերն վերժանելով՝ ուր ընդ այլն մատնանիլ ըրած էք վշտի պէտքը, անխորչելի վորձերու հանդէպ մարդոց հաւասարութիւնը և մարդ կային կենաց խարուսիկ լինելը, նախ լացնել տուած էք օպառաժ սրտերն անզամ և լալա ճշխարիտ վիլիստիօյութեամբ արցունքները սրբած և զովարար սիրտի սիրած սրտերու: Տա՛յր երկինք որ յաւէտ Ձեր հայրենական օրհնութիւններն Ձեր ազնուասիրտ Հրանտ որդւոյն և Ձեր հրեշտակաւոր թոռանց վրայ տեղալու բազդն ունենաք և նոցա երջանկութեան ի տես զգացած գոհութիւնն վայելէք յաւէտ:

Ի յիշատակ ողբացեալ Վահէի կը զրկեմ մի քանի բանաստեղծական և գիտական մատենաք տեղւոյդ Հա՞

յոց լինթերցատան՝ որոյ գլխաւոր հիմնադիրներէն մին
եղած էք, հեազհետէ ուրիշներ ալ պիտի զրկեմ, կը
յուսամ որ առաջի զրկածներս ընդունած էք:


Հաճեցէք մատուցանել, սիրելի բարեկամ,անկեղծ ցաւ
ւաղցութեանցս հետ խորին մեծարանացս հաւաստին Ձեր
համեստադիայլ Տիկնջ և աղնուաչուք Հրանտ էֆէնտիի:

Սիրով ողջունելով զՁեզ կարօտիւ,

Մնամ Ձերդ

Վալովա, 26 Սեպտ. 1897

ՄԻՀՐԱՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ



Մեծանուն Տէր

Մորմօքեալ սրաիւ ընթերցայ լրագրաց մէջ որ աւ
նուանակիցս՝ սիրեցեալ Վաչէդ, աւա՛ղ, ո՛չ ևս է, այն
Քաղցրախօս սոխակն որ իւր գեղգեղ դայլայիկներով
յարաժամ իւր ծնողաց թախիժն խնձիւղի կը փոխէր,
թռած սլացած է երկնային թառնոցը, այժմ հոն թա
ւած է ազատարար:

Չքնաղ անուակցիս անրիժ հոգին կը սուրայ, կը ճա
խրէ գրախտի անծայրածիր բնագաւառներուն մէջ՝ ուր
փոխան ցաւոց և հեծեծանաց, երանաւէտ անմահու
թիւն և անձառ երանութիւն կը ճառագայթէ: Եւ ու
թամեայ մի մանուկ ի դիմաց հանուր հայ մանկուոյն
անզօր թեւերս սրարգելով կ'աղօթեմ ջերմեռանդ սրաիւ
Հայոց բարի Աստուծոյն ի հանգիստ հոգւոյ բիւրիցս
ողբացեալ Վաչէի:

Վաղամեռիկ անուանակցիս սիրելի հօր՝ Հայոց մեծ
վարժապետին՝ Հայ զրախանութեան Նահապետիդ կե-

նաց արեւշատութեան համար ալ կ'աղօթեմ թաղիատարած, մաղթելով որ երկնային զթած Հայրիկը խաղաղէ Ձեր խռովեալ և արտմաթախիծ սրտիկը և ցօղէ անդ երկնապարզ և սիրտի: Արեմն մի' ևս հեծեր, մի' ևս արտաուեր, մեծ 'ն բարեգութ Աստուածը կը լսէ անմեղ մանկանց աղօթքներուն՝ որք անչուշտ այսօր ինձ կը ձայնակցին: Ա՛չ ապաքէն, Մեծանուն Տէ՛ր, բովանդակ Հայ մանկտին Ձեր հոգևոր և մտաւոր զաւակներն կը համարուին, ո՛չ ապաքէն Դուք ամենուն էք տարփելի և պաշտելի, ինչպէս Դուք նոյնօրէս և մենք ամենքս, երբ ամեն անգամ վաղասլացիկ Վահէի յիշատակաւն մեր աշունքն դէպ ի երկինք կ'ուղղուին, մխիթարուինք, յուսամք և աղօթեմք:

Մի քաղցրիկ յիշատակ եղբայր Վահէի կը փութամ նուիրել, Յ մէճիտի դրամս, ի նպաստ Ս. Փրկչեան Որբանոցի՝ զորս հաւաքած եմ շուրջ տարի է մ'ի վեր գանձանակիս մէջ. կը յուսամ որ ծնողքս ինձ ըրած նուէրներն այս կերպով գործածելու համար գոհ կըլլան:

Մնամ ամենախորին մեծարանօք և համբուրիւ վաստակեալ աջօրդ,

Վ. ԹՈՒՄԱ, 26 ՍԵՍՏ. 1897

Հնազանդ որդի Ձեր
ՎԱՀԷ Մ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Սիրելի Մամուրեան

Գիտէք՝ թէ հազիւ մի տարեկան էր Վահէն, երբ Անաջնորդութեան պաշտօնով եկայ ի Ձմիւռին: Գիտէք նոյնպէս թէ որչա՞փ սիրելի էր ամենուս: Ա՛ճէր հասակաւ, կ'աճէր շնորհօք, կը հնչէր պարզ, կ'արտաստնէր մա-

քուր և կը գրաւէր տեսնողին աչքն ու սիրուն միանգամայն:

Չկայ սէր առաւել բարձր, առաւել սրտազեղ քան սէրն առ մանուկն, քանզի կը սիրուի նա անմեղութեան համար, կը սիրուի հոգեկան կենդանութեան համար, որ կը ցոլանայ իւր աչքերուն մէջ, ժպիտներուն մէջ, շարժումներուն մէջ: Մանուկն կը սիրուի, բայց ինքն ևս անտարբեր չէ, ինքն ևս կը սիրէ, զի քաջ կը ճանչէ զինքն սիրողն: Կը սիրէի Վահէն, կը սիրէր նա զիս, շատ անգամ մանկական թաթիկներով կը փարէր, կը փաթթուէր պարանոցիս, մանաւանդ երբ մեղմ ձայնով կերգէի, զի երգելէն իսկ կ'զգածուէր և կ'ստիպէր շարունակել:

Մի զարմանալի նկարագիր ունէր Վահէ, գրեթէ միշտ մանուկ էր: Մանկական շնորհքն կը փայլէր իւր փրայնոյն իսկ այն ժամանակ, երբ սկսած էր զպրոց յաճախել ի Զմիւռին: Նոյն շնորհքն կը ցոլար ամեն վարձուներուն, ամեն շարժումներուն, ամեն խօսքերուն մէջ, երբ եկած էր ի Պօլիս և Պէրպէրեան վարժարանի մէջ կը շարունակէր իւր ուսումն:

Զուարթ էր և ամսթխած, արթուն և զիւրազգած: Ուսուցիչներէն սիրուած էր որպէս զաւակ, աշակերտներէն՝ որպէս եղբայր: Որչա՛ր ուրախ կը լինէր, երբ արձակուրդ օրերու մէջ կ'գար ինձ մօտ ի Գատը - Գիւղ, և որչափ կը ցնծայի ես, երբ կը նշմարէի թէ՛ կը սիրէ ուսումն, կը սիրէ զիտութիւնը, բայց միշտ կը սիրէ նաև բարին, ճշմարիտն, ազնիւն և իւր միտքն ու սիրան հաւասար ուղղութիւն և գեղեցկութիւն տուած են իւր կամքին, իւր կեանքին:

Մօր նամակներն խնամով կը պահէր և երբեմն կը կարդար ինձ, որոնք մեծ մասամբ մաքրասիրութեան,

առողջապահութեան, բարեսիրութեան և ուսումնասիր-
թեան խրատներ և յորդորներ էին, և արդէն Վահէն
ինքն մաքրասիրութեան, բարեսիրութեան և աշխատա-
սիրութեան տիպար էր:

Անպատում կերպիւ սրտաշարժ էր այն ժամն, երբ
Վահէ Հրաժեշտ կ'տար ինձ ի Զմիւռին վերադառնալու
և Անգղիական վարժարանի մէջ իւր ուսմունքն շարու-
նակելու: Ուրախ էր որ կը վերադառնար իւր սիրելի
ձնողաց գիրկն, տխուր էր, որ զիս կը թողուր: Այս ժա-
մըն մարդկային կենաց այն ժամերէն է, ուր ուրախու-
թիւն և տրտմութիւն իրար կ'խառնուին, ուր արտա-
սուքն իսկ թէ ուրախական է և թէ՛ տրտմական: Իմ
վիճակս ևս նոյնն էր, ինչ որ Վահէինն: Գիտէի թէ Վա-
հէն յօտարութիւն չէր երթար, այլ իւր ձննդավայր
քաղաքն, իւր ձնողաց և արեւակցաց մօտ, բայց մի ան-
բացատրելի թախմութիւն պաշարած էր զիս և չէի
կարող արտասուքս զսպել:

Վահէն կը բաժնուէր մի՛ մտնաք, մի՛ մտնաք զիս
կը կրկնէր, մի պահեցնէք Ձեր հայրական օրհնագիրն:
Ձեմ մտնար, չեմ մտնար կը պատասխանէի, բայց կը
յաւելուի միանգամայն՝ արդեօք պիտի կարենամ վե-
րադիմ տեսնել զքեզ, սիրելի Վահէ, իսկ ինքն կը խոս-
տանար — եթէ Դուք չգաք ի Զմիւռին, ես կ'գամ ի Պօ-
լիս և զիս կը տեսնէք:

Այսպէս բաժնուեցաւ Վահէ, սիրելի Մամուրեան, և
ես երբ տեղեկութիւններ կ'ստանայի թէ Ձեզմէն և թէ
մանաւանդ ականատես և ծանօթ եկաւորներէ թէ՛ Վա-
հէն մեծցած է, շնորհալի երիտասարդ եղած է, իւր
ազնիւ վարք ու բարքով ամենուն սէրն և համարումն
գրաւած է, հոգիս կը ցնծար և կ'ասէի ինքնին. — Վահէ
իւր ազնիւ ձնողաց արժանի զաւակն է. Վահէ ձնունդ

է սիրոյ և իմաստութեան. Վահէ երբէք պիտի չը նստ-
մացնէ այն փառքն, զոր ունին իւր ծնողքն՝ իբրև աս-
մուսնական տիպարը ընտանեկան կենաց, իբրև ազնիւ,
զշօն և բարեւէր անդամք՝ Հայ ընկերականութեան, իբ-
րև լծակից մշակը, Հայ գրականութեան, ճշմարիտ դաս-
տիարակութեան:

Այսպէս յուսանիծազ էին մտածուցներս, Սիրելի
Մամուրեան, և անպայման էր ուրախութիւնս տեսնելով
թէ՛ Վահէ լիովին կը պատկերէ իւր վրայ իր ծնողաց բոլոր
բարեմասնութիւններն: Բայց միթէ կա՞յ աշխարհիս վրայ
տևական ուրախութիւն: Միթէ կա՞յ սիրտ, որ ցնծա-
ցած լինի՝ առանց տրտմութեան: Միթէ կա՞յ աչք, որ
միշտ ծիծաղած լինի և ոչ երբէք արտասուած:

Ձեր ողբացեալ հարսի մահէն զկնի՝ Ձեր սգագիծ
գրերն սկսան Վահէի հիւանդութիւնն հաղորդել: Ա-
միսներ կը սահէին, ամիսներ կը հոլովէին և հիւանդու-
թիւն, տապ, տագնապ բառերն ևս կը հոլովուէին Ձեր
գրերուն մէջ: Շատ սրտաճմիրիկ էին մանաւանդ Ձեր տո-
ղերն, որով կը յայանէիք թէ՛ Վահէ կը փափարի առ
Ձեզ գալ, կը յուսայ թէ՛ Ձեր մօտ ի Պոլիս՝ ամբարմն
և բոյժ կը գտնէ իւր տագնապներուն: Ար խոտտանա իք
զրկել, բայց կը յարէիք միանգամայն թէ շատ ուժա-
թափ է, կարող չէ ուղևորութեան անհանգստութեանց
տոկալ: Ձեր գրերն Վահէի վիճակին պատկերն էին
մերթ յուսալից, մերթ տրտմախառն, մերթ սրտայոյզ:
Եւ ահա՛, յանկարծ լրագիրք գուժեցին Վահէի մահն:
Ո՛չ սիրտս դղրդեցաւ, սիրելի Մամուրեան, չեմ՝ կարող
նկարագրել թէ ինչ տպւորութիւն ունեցաւ իմ վրայ
այս գառնազէտ մահն: Վահէն, ազնիւ և շնորհաբոյր,
Վահէն իբրև ծաղիկ թառամած, թօշնած, գորովալիբ
ծնողքն ու սիրելի հարազատն՝ իւր շուրջ նուազած,

թաղկացած: Այսպիսի տխուր պատկերացումներ և խորհուրդներ այնքան ազդեցին, որ շիրարացի Չեղ յայանել վշտակցութիւնս: Քանի՛, քանի՛ անդամ գրիչն ձեռքս առի՛ ըայց փոխանակ գրելու՝ սկսայ լալ:

Նոյն իսկ այսօր, եթէ կը գրեմ, Ձեր գրոյն պատասխանելու համար է, որ կը գրեմ, տեսնելով որ շատ վըրդոված էք երկար լուծեանս մասին: Բայց միսլծարապէս է արդեօք գրածս թէ արամական, չգիտեմ:

Ա՛խ, մի մեղադրէք զիս, Սիրելի Մամուրեան, գրչի լուծիւնն մի՛ համարէք նաև լուծիւն սրտի, ընդարմացումն զգացմանց: Ա՛չ, ո՛չ, իմ վշտահար փիճակիս մէջ՝ Ձեր վշտերն սփոփելու համար, պէտք էր որ նախ զիս սփոփէի, զիս մխիթարէի: Քանի կը մտածէի այս մասին, կը տեսնէի թէ՛ որովք շատ սիրած են, շատ ևս լացած են: Լացած են Նահապետներն, լացած են քահանայք, լացած են Մարգարէք:

Յակօր Նահապետ, երբ Յովսէփի մահուան գոյժն լսեց իւր ստահնար որդիներէն, (զի ծախուած էր Յովսէփ և ո՛չ թէ մեռած) պատառեց իւր հանդերձն, քորձ զգեցաւ և գոչեց, « պիտի լամ, պիտի լամ մինչև որ երթամ որդւոյս միանամ »: Հեղի երբ լսեց իւր երկու որդոց մահն (տաղանակի գերութեան հետ) սաստիկ վշտէն քահանայապետական օթոսէն ընկաւ և մեռաւ: Գաւիթ երբ Արիստղումի սպանման լուրն առաւ ազազակեց արտասուելով, « Արդեա՛կ իմ Արիստղում, Արիստղում որդեակ իմ »: Ա՛յ, լացաւ և մեր Փրկիչն, որ եկած էր մարդկութեան հիւանդութիւններն բժշկելու և ցաւերն վերացնելու: Լացաւ իւր բարեկամ Ղազարոսի մահուան լուրն առած ժամանակ և ներկայք զարմանալով ասացին, « Տես՛ք, թէ որչա՞փ կը սիրէր »: Լացաւ նա, որ արդէն քանի՛ հը վայրկեանէն զկնի՛ պի-

տի յարուցանէր ադ մեռեալն: Ասցաւ և իւր արտասուած մէն մի կաթիլն այնքան խորհախորհուրդ էր, որքան իւր սէրն: Անշուշտ, Փրկչի արտասուաց մի կաթիլն աւելի խոր էր՝ քան ովկէանոսի յատակն, ինչպէս որ բարձր էր նորա սէրն քան երկնակամարն:

Թողունք նահապետներն, Սիրելի Մամուրեան, թողունք մարդարէ և ամենքն, որոնք շատ սիրեցին և շատ լացին: Յիսուս արտասուեց, վասն զի կր սիրէր իւր բարեկամ Ասգարոս: Մենք կ'արտասուենք վասն զի կը սիրէինք վահէն: Բայց սէրն, ճշմարիտ սէրն, ինչպէս որ արտասուք ունի, նոյնպէս ունի և մխիթարութիւն և այս արտասուքն ու մխիթարութիւնն կը բղխին Յիսուսի արտասուքէն ու մխիթարութենէն՝ ամենուն համար, որոնք կը հաւատան Յիսուսի սիրոյն: Այս Սէրն արտասուքով չչատանար: Այս Սէրն միայն դադաղ շտեմներ աշխարհիս վրայ, այլ անմահութիւն: Այս Սէրն միայն հողացեալ մարմին ու փոշի շտեմներ, այլ նորոգութիւն, այլ անապականութիւն, զոր պիտի հագնի մահկանացու մարմինն:

Սէրն անմահ է, սիրելի Մամուրեան, սէրն մահ չը տեսներ, այլ բաժանում, սէրն գերեզման չը տեսներ, այլ նինջ, ննջարան, հանգստարան: Այն օրէն որ հընչեցաւ այս անմահութեան բարբառն, «Ասգարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի դարթուցից զնա» այն օրէն մահն ու մեռնելն կորուսին իրենց նշանակութիւնն Քրիստոնէից համար: Այս բառերուն տեղն գրուեցին ննջելն ու դարթնուն: Այս էր որ աւետեն աշխարհի Յիսուսի աշակերտներն, այս աւետարանութեամբ զինեցան և հալածեցին նոքա մահուան ու դերեզմանի սարսափն հաւատացելոց սրտերէն, վասն զի մահուան յաղթութիւնն ընկուղած էր և գերեզմանի

խորախիան լցուած յուսով յարութեան: Այս յաղթա-
կան աւետիսն էր, զոր հաշակեց Պօղոս գոչելով. «Ո՞ր
է, ո՞վ մահ, քո խայթոցդ, ո՞ր է, ո՞վ գերեզման, քո
յաղթութիւնդ »:

Այսպէս ահա՛, սիրելի Մամուրեան, Սէրն կ'արտա-
սուէ, բայց և կը հաւատայ, կը յուսայ, կը համբերէ:
Ամեն բան կ'անկանի, Սէրն չանկանիր: Մարգարէու-
թիւններն կը զազարին, լեզուախօսութիւններն կը լը-
սեն, գիտութիւններն կը խախտին, իսկ Սէրն կ'մնայ և
Սէրն մեծ է քան հաւատն և յոյսն: Եթէ մենք կը սի-
րենք մեր Փրկիչն, անշուշտ կը հաւատանք և իւր խօս-
քերուն, կը հաւատանք որ միայն Վաղարոսն չէր իւր
բարեկամն, այլ մենք ամենքս զի ինքն իսկ ասած է,
« Դուք իմ բարեկամներս էք »:

Արդ՝ Սիրելի Մամուրեան, ինչպէս որ անսահման է
Աստուծոյ Սէրն առ մեզ, նոյնպէս և մեր սէրն առ Աս-
տուած և առ մեր սիրելիներն պէտք է լինի անսահման,
անդուքան զգերեզման, անդրքան զտիեզերք: Քանի
որ Սէրն մահ չունի, նոյնպէս մահ չունի, ինչ որ կը
բղխի ի սիրոյ. — Բարեսիրութիւն, ճշմարտասիրութիւն,
արդարասիրութիւն, մարդասիրութիւն *և* *և*: Եւ միթէ
Վահէի հոգեկան բարեմասնութիւնքն գերեզմանէն ար-
տաքոյ մնացած չե՞ն: Միթէ ի կենդանութեան միշտ
պիտի չյիշենք նորա շնորհներն, որոնք մարմին չէին որ
հողանան, չունչ չէին որ սպառին, այլ ցոլմունք անմա-
հութեան, ցոլմունք Աստուածային հոգւոյն, զի մարդն
չէ լոկ մարմին և չունչ կենդանի, այլ հոգի կենդանի:

Այո՛, այո՛, պիտի յիշենք և այս յիշողութեան միջ-
է սիրոյ մխիթարութիւնն: Այս մխիթարութեամբ է ա-
հա, որ և ես կը կնքեմ՝ զբաժններս ասելով — Վահէ՛,
Սիրելի՛ Վահէ՛, Դու չմահացար, այլ բաժնուեցար, Դու

չմեռար, այլ քնացար և հանգստացար: Արտասուեցինք՝ քեզ համար, բայց կը հաւատանք՝ թէ պիտի զարթնուա:

Այս հաւատն՝ թո՛ղ մխիթարէ արտասուաթոր ծընողքդ և ամեն քեզ սիրողներն:

27 Սեպտ. 1897

ՄԵԼՔ. ԵՄԻՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Պատը - Պիւլ

Պատուական Տէր

Եւ Գերազնիւ Բարեկամ

Ձեր պատասխանն ստանալու բարերախտութիւնն ունեցայ, ու համարոյր դրի Ձեր նամակին վրայ ինչպէս երկար ատենէ ի վեր տարակայ ու բացակայացած մտերիմի մը ճակտին վրայ: Աւա՛ղ, այս բարերախտութիւնն որքա՛ն դառնութեամբ խառն է հիմայ և մեր թղթակցութիւն քանի՛ տարբեր այն նամակներէ զորս երեք չորս տարիներէ յառաջ կը վտխանակէինք: Պայծառ ու բախտութիւն մը կը սփռէր երբեմն մեր ընտանեկան շրջանակին մէջ Ձեր նամակը երբ կը հասնէր. այժմ Ձեր վեհ ու գորովալիր սրտէն ու ճոխառատ գրչէն բղխած տողերը նոյն զմայլուն անյագութեամբ ու սիրալիր խանդիւ կը լսուին, բայց միանգամայն արցունք խլելով մեր աչքերէ, վասնզի կարի վերաւոր ու արիւնոտ են մեր սրտեր: Ա՛հ, սիրեցեալ բարեկամ, ինչո՞ւ բախտն այսպէս վարուի, ինչպէս իրաւամբ կ'ըսէք դանգատելով սրտապատառ, այնպիսեաց հետ որք ամենէն համեստ թղթերն ունին, ունենալով թերևս ամենէն մեծ իրաւունքներն անոր շնորհներուն: Ինչու վա՛հէն, վա՛հէն

ծաղկատի ու ծաղկահոգի չի մնար Ձեզի իւր ազնիւ եղ-
բօր հետ Ձեր միակ դանձը, Ձեր արդիւնալի ու վաս-
տակալից կեանքին միակ վարկը, իրենց ծնողաց աչքե-
րուն միակ լոյսը ու սրտին միակ ուրախութիւնը: Արժ-
բազմաթիւ տարիներու քրտնաթոր աշխատանքէ յետոյ,
այսօր իսկ Ձեր ընտանիքն ապրեցնելու համար դասեր
տալու ու հոս հոն վազելու պարտական էք, բախտին ու
մարդոց այդ անիրաւութիւնը բերկրութեամբ կը տա-
նէ իք, բաւ՝ էր որ Ձեր սիրելիները տեսնէիք Ձեր շուրջը,
անոնց գորովանքովը սիրտուած ու անոնց ժպիտէն
քաղելով Ձեզ միշտ նոր կորով: Եւ ահա այդ ընտանե-
կան շրջանակն ալ կը խրամատի, սիրելիները կը մեկնին,
սգապատ կը մթննայ ընտանիքի հորիզոնը ու Ձեր սրտին
ամենէն զգայուն մասերուն մէջ վիրաւորուած, հար-
ուածեալ բողոքոյ մուռնչ մը կարճակէք շուարած, ու
չէք հասկնար եղածը: Իրաւունք ունիք չհասկնալու,
կամ մանաւանդ հիմայ կ'սկսինք հասկնալ, հարուածնե-
րէ ցնորաթափ եղած, թէ ինչ է կեանքը, թէ անոր շը-
նորհներուն վրայ ինչ աստիճան կարելի է վստահիլ, թէ
ինչպէս բազդը ոչինչ կուտայ մեզ այլ փոխ կուտայ միայն
յաճախ, և թէ մանաւանդ զգայուն հողիին համար բով
մ'է ասի, չարչարանքի այս կեանքը ու սէրը տառա-
պանաց ծուղակ մը:

Ու քանի՜ տառապեալներ արեւին տակ, ինչ հեծե-
ծանաց քստմնելի համերգութիւն աշխարհի վրայ . . .
Սիրտիանք չեմ տար, սիրտիանքն յուսախաբութիւն է:
Հէք մեկնող հողիները միթէ կրնա՞ն մոռցուիլ: Հողիին
առած վէրքը միթէ կրնա՞յ բուժիլ: Ամենէն աւելի գոց-
ուած կարծած ատենդ կը բացուի՞ր բոլոր լայնութամբ
ու արիւն կը պոռթկայ առատ: Ալ բռնի և տրամախառն
է ժպիտը եթէ վերադառնայ իսկ երբէք, այն ալ չրթ ուն-

քին վրայ հաղիւ ծրագրուած՝ արտաձիւ պատկերէն իսկոյն ջնջուելով: Միայն թէ երբ սիրովանքն ևս դու այլոց որ քովդ են ու անոնց ալ մէջ նուազեալ կեանքին Գուն նեցուկն ես: Նոյն իսկ գացող հոգին՝ որ կը սիրէր զանոնք՝ պիտի հաւանի՞ որ իրեն դառնաս համակ ու քեզ գրաւէ ինք միակ:


Ձեզ առ իս քաջալերիչ և յուսատու խօսքերէն շընորհակալ, կը խնդրեմ որ Ձեր վշտին սրտագին բաժանորդութիւնս ընդունիք իբրև հաւաստիք անկեղծ ու անջինջ սիրոյս առ Ձեզ. և իցիւ՞ իմ ու այլոց մտերմաց վշտահաղորդ այդ զգացումն ըլլար Ձեզ համար ոյժ մը սրտապնդիչ:

Ձձեզ և Ձեր պատուական կենակիցն ու որդին հօրամոյն Չարուհիին հետ կարեկից, սիրով ողջունելով,

Մնամ միշտ Ձերդ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ժրնէզ՝ 2 Հոկտ. 1897



ԱՅՅԵՔԱՐՏԵՐՈՎ ԻՐԵՆՅՅՍԱՒԱԿՅՈՒԹԻՒՆՆ
ՅԱՅՏՆԱԾԵՆ

- Պատ. Մխիթարեան Միաբանութիւնը. — Վեկետիկ
Տէր Է. Տիկին Տօրր. Կ. Փաշաեան. — Դալրեմ
» » » Ա. Զիլինկիբեան. — Պարուս
» » » Գ. Գ. Գասպար. — Պարավիս
Այրի Տիկին Ս. Աւետիբեան. — Տրեգսեն
Տիկին Հ. Վարպետեան. — Մանչեսթր
Մեծ. Յովնան Գ. Փաշազաղեան. — Կ. Պոլիս

- Ֆեժ. Զարմայր ճշմարտախօսեան. — Կ. Պօլիս
» Ստեփան Ս. Աւետիքեան. — Տրեզսկն
» Վանան Բիւրքաճեան. — Նիկոսիա
» Զատիկ Բօրովիչ. — Վիեննա
Տէր Է. Տիկին Լեւոն Մկրտիչեան. — Զմիւռնիա
Այրի » Գ. Մսերեան. — »
Մեծ. Տօրր. Վանէ Միմասեան. — »
» Գ. Յ. Փափազեան. — »
» Գ. Շնորհքեան. — »
» Մ. Մսերեան. — »



Ք Ա Ղ Ա Ի Ա Ն Ք Ա Չ Գ . Թ Ե Ր Թ Ե Ր Է

Վ Ա Հ Է Ն Մ Ա Մ Ո Ւ Ր Ն Ա Ն

Երէկ հողին յանձնեցինք Վահէն՝ Մամուրեանի կրտսեր որդին, որ տարիէ մ'ի վեր կը տառապէր հիւանդութեամբ: Հազիւ տարի մ'անցած էր որ գոցուեցաւ Մարին (իւր հարսին) գերեզմանը և հիմակ ներս մօտ կը բացուէր Վահէինը:

Կորուստներ կան որ ամենացաւալի հետքեր կը թողուն իրենց ետին և կան ալ որ տարին չանցած կը մոռցուին: Վահէին կեանքը անոնցմէ չէր, հազիւ 21 տարեկան, գառնուկի պէս հեղ և ազնուազէմ պատանին, Իզմիրի երիտասարդութեան մէջ մեծ տեղ մը զբաւելու սահմանուած էր:

Հիւանդութիւնը բուժելու համար իր ծնողքը Իզմիրի մօտ Պուճա գիւղը օդափոխութեան տարած էին, Բայց հալումաչ ախտը յառաջ գացած էր, այնպէս որ՝

երէկ առտու մեր գրականութեան պատկանելի մէկ պետին, իր հօրը բաղուկներուն մէջ, վերջին շունչը աւանդեց: Տեսնելու էր Մամուրեանի վիճակը, դժբա՛ղք հա՛յր, այնքան լացած էր որ՝ աչքերն ուռած էին: Յաւեցայ աւելի այդ ալեհներ նահապետին՝ որու դժբաղդութիւնը ամօքելու համար բառեր կը պակսէին, և մօտս գտնուող բարեկամիս ըսի «Սյո ցուրտ թագադէն աւելի հայրն է որ զիս կը յուզէ՛ »: Երբ արարողութիւններն վերջացան և կարգը եկաւ փոսն իջեցնելու կէտին, Վահէին երեսը բացին. Մամուրեան և մեծ որդին, Հրանտ, վերջին համրոյրը պիտի տային. հոս յուզումը տիրեց ամենուն վրայ, շատեր կը հեծէին: Սկեպտիկ մ'ըլլալովս հանդերձ չ'կրցի բռնել հեկեկանքներս, զոր կոկորդիս մէջ խեղդել կը փորձէի, երբ մանաւանդ ալևոր Մամուրեան հեծկլտանօք դագաղին վրայ ինկած «զաւա՛կս՝ Վահէս» պոռալով կուլար:

Հօկառակ գոյժին անակնկալ և առանց մահազգի ըլլալուն, քանի որ օրը կիրակի էր, գերեզմանատուներ բաւական բաղմութիւն եկած էր ի յարգանս Մամուրեանի, և գրեթէ մեծ մասամբ իր աշակերտներն էին:

14 Յուլիս 1897

(Մ—ի—)

Տ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Վ Ա Շ Է Մ. Մ Ա Մ ՈՒ Ի Բ Ե Ա Ն

Հայ գրականութեան բազմարդիւն վաստակաւոր և Իզմիրի Հայ Հասարակութեան մտաւոր զարգացումին անխռնջ սատարող Մեծանուն Մամուրեան՝ երէկ նոր և անդարմանելի կորուստ մ'ալ ունեցաւ յանձին իր երկու զաւակներէն կրտսերագունին: Վաղամեռիկ Պ

Վահէ՛ Մ. Մամուրեան, քսան և մէկ դարուններ հազիւ
բոլորած, երէկ անդարձ մեկնեցաւ յաւիտենականու-
թեան ծոցը, յափշտակուելով բոլորանուէր խնամքէն ու
գօւրգօւրանքէն իւր վշտահար ծնողքին, որոնց, ինչպէս
նաև բոլոր զինքը մօտէն ճանչցողներուն, մշտապէս և սուգ-
ու կսկիծ կ'իթողու այդ գերազանցօրէն բարձր և ազնիւ
զաւակին անժամանակ մահու: Քէ և այս ծանր ազէտը բո-
լորովին յանկարծակիի չ'ըերաւ Մամուրեան զերդաս-
տանն ու իր համակրողներն, — զի տարիէ մ'ի վեր կը
տառապէր ազնիւ Վահէն և առաջնակարգ բժշկաց
յուսազրոյ խօսքեր իրենց ճշմարիտ արժեքով միայն
կ'ընդունուէին, — այսու ամենայնիւ հէզ Մամուրեան
և իր արժանաւոր ամուսին կը սիրէին խարուիլ վա-
զանցիկ երևոյթներէն իրենց զաւակը կրժող անագորոյն
հիւանդութեան, որ նոյն իսկ մահուան նախորդ օրն
հետիտան պտոյտներ ու սիրուն կատակներ կ'իթեւազրէր
սիրեցեալ հիւանդին. և Մամուրեան շատ իրաւունք ու-
նէր երբ իր սիրասուն զաւակին անշնչացած մարմնոյն
առջև ծնրադրած դառնապէս կուլար ու կը դանգատէր
թէ նախաբաժ էր զինքը: Իրաւ է որ ո՛չ առաջին և դըժ-
բազդարար ո՛չ ալ վերջին քմահաճոյքն է այս՝ անկարե-
կիր մահուան. իրաւ, նոր չ'պիտի սովորինք մարդկային
կեանքի ունայնութիւնն ու անկայութիւնը, սակայն
նոյնքան իրաւ է որ, այս ամենը գիտնալով մէկտեղ,
նորէն չենք կրնար խորին ակրութեամբ համակուելէ
արգիլուիլ երբ կ'տեսնենք որ զեռապիթիթ նորածիլ
կեանք մ'է որ կ'ստարի այսքա՛ն տարածամ և որու
վրայ այնքա՛ն յոյսեր տրուած էին շատ իրաւամբ:


Երէկ հէք Վահէին ցուրտ դագաղէն աւելի ազգեց
ինձի Մամուրեանի հայրական սրտին խորտակու մին ար-
տաքին արտայայտութիւնն՝ իր պատկառելի դէմքին, իր

ամբողջ կազմուածքին վրայ. նա որ ամբաստանող կուրծք
տուած էր կեանքի պայքարին դժուարութիւններուն
ու դառնութիւններուն, կ'տկարանար ու կ'ընկճէր այս
լախտի հարուածին ներքեւ: Այդ վշտարեկ հօր և ազնիւ
տիկին Մամուրեանի համար չ'ուենիմ' մխիթարական բա-
ւական ազդեցիկ բացատրութիւն. միայն կ'ուզեմ' հա-
ւատալ և կը մաղթեմ' որ ամենակարող ժամանակն և
իրենց միակ զաւակը, Պ. Հրանտ, կարենան գէթ միօք
ինչ թեթեացում բերել իրենց այնքան իրաւացի վշտին
որուն իր հոգւոյն ու սրտին բոլոր ոյժով կը մասնակցի

14 Յուլիս 1897

(Բէ-ւ-ն-դ-ն)

ՅԱԿՈՒ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Թէ էստիւֆը ազիմէ ալտըղըմըգ խապէրէ կէօրէ, Իզմիր
րէֆիգիմիզ Արևելեան Մամուլ րիսալէի մէվգութէսի-
նին սահիպի Մամուրեան Մատթէոս էֆ. նին իքինճի
մախտումու, Մամուրեան Վահէ էֆ. 21 եաչընտա զա-
լիմ էճէլին բէնչէսինտէն գուրթուլամայուսլ, մահը հա-
լըն 15 իւնճի բագար կիւնիւ Իզմիրին Պուճա գարիյէ-
սինտէ վէֆաթ իթմիչ, վէ միւսինն էպէվէյնինի վէ սիլ-
ճիւմէ ազրապա վէ թէալիւզաթընը եաս ու մաթէմէ
զարգ էյլէմիչ տիր:

Միւթէվէֆայի մումաիլէհ' բէտէրինին խայր իւլ
խալէֆի օլուսլ, էրպապը գայէմտէն պուլըմազլա, աթի-
սի չիւպհէսիզ բարլագ օլան պէօյլէ պիր կէնճին զայըսլը
էպէտիսի' թէսէլի գապուլ իթմէզ զայիթտան իտուկի
տէրքեար պուլընտըզընտան, բէտէր վէ վալիտէ վէ սիլ-
ճիւմէ թէալիւզաթընա սապըլը ճէլիլէ սամէտանի թէ-
մին օլընըր:

4. Պոլիս 17 Յուլիս 1897

ՃԷՐԻՏԷԻ • ՇԱՐԳԻՅԷ

Խորին ցաւով կը հրատարակեմք՝ ի Զմիւռնիա, մեր վաղեմի և հանրածանօթ պաշտօնակիցն, Մատթէոս էֆէնտի Մամուրեան, Աբէ-էլ-Կան Մալայ արտօնատէրն, այս օրերս ամենամեծ կորուստ մ'ունեցաւ: Երկրորդ որդին, Պ. Վահէ՛ որ Զմիւռնիոյ մերձակայ Պուճա գիւղի մէջ օդափոխութեան համար կը գտնուէր, — ի յաւիտեանս փակեց աչերն, ամսոյս 15 ին առաւօտ, ալեղարդ հօրը բացկաց վրայ: Ամէն զգայուն մարդ, բայց առաւել հայր մը, և Մամուրեան էֆէնտիի նման հայր մը, քանի՛ անմխիթար սգոյ մէջ կ'ընկղձի այսպիսի կորստեան մը վրայ, դժուարին չէ մտկաբերել: Վահէ դեռ 21 տարեկան, դեռ թարմ ու ծաղիկ հասակի մէջ, ուսեալ ու բարեկիրթ և մեծ ապագայի տէր էր: Ահա այսպիսի գաւկէ մը տարածամ կը զրկուի մեր մեծապատիւ պաշտօնակիցն: Կը վշտակցիմք և մխիթարութիւն կը մաղթեմք յերկնուստ:

Կ. Պօլիս 19 Յուլիս 1897

ՓՈՒՆՁ



ԳԻՆ 100 ՓԱՐԱՆ

